№ 286 ԿԻՐԱԿԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26

1904

ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26 № 286

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—5 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԱՌԱՋԻԿԱՅ **1905** ԹՒԱԿԱՆԻՆ

(33-ՐԴ ՏԱՐԻ)

«ՄՇԱԿԸ» ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

ամեն օր, բացի տօներին յաջորդող օրերից։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 բուբլի է, տան է մէկ ամսվանը նոյնպէս 10 բ., տան ամսվանը՝ 9 բ., ինն ամսվանը՝ 8 բ., 8 ամսվանը՝ 7 բուբլի, եօթ և վեց ամսվանը՝ 6 բ., հինգ ամսվանը՝ 5 բ., չորս ամսվանը՝ 4 բ., երեք ամսվանը՝ 3 բ., երկու ամսվանը՝ 2 բ. և մի ամսվանը՝ 1 բուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 բուբլի։

Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բաբօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ» իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տեղական ինքնավարութեան հիմնարկութիւններ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Բժիշկ Գէորգ Կաճկաճեան. Շուշեցիների ողբը. Նամակ Կողբից. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Վաքիլբաշին։

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Երէկվայ մեր առաջնորդողում մենք ասպարէզ դրինք մի քանի խնդիրներ։ Մեաք չը յիշատակեցինք շատ ուրիշ խընդիրներ, որոնց աջող լուծումը կարևոր է մեր երկրի բարօրութեան համար։ Այդ մենք կանենք աստիճանաբար, հրաւիրելով մեր ինտելիգենտ ոյժերը աջակցելու ընդհանուր գործին իրանց գործակցութեամբ։

Մի հիմնական հարց, որ առաջ է գալիս ամեն անգամ, այն է լինում, թէ ինչ ձեով, ինչ միջոցներով մենք պէտք է իրագործենք այս կամ այն խելացի առաջարկը կամ ծրագիրը կեանքի մէջ։

Դուք, օրինակ, գիտէք և համոզվել էք, որ անհրաժեշտ է մտցնել ընդհանուր ժողովրդական գրագիտութիւն ազգաբնակութեան մէջ. դուք, օրինակ, մշակել էք նախագիծներ տարածելու արհեստներ ժողովրդի մէջ. դուք ծրագրել էք ժողովրդական գրադարանների մի ցանց երկրի զանազան մասերում, դուք պատրաստել էք մարդկանց մտքերը իրագործելու ժողովրդական կրեդիտի հիմնարկութիւններ և առհասարակ օգնելու ազգաբնակութեան մտաւոր և տնտեսական զարգացման։

Այդ բոլորը ձեզ համար պարզ է, բայց որտեղից գտնէք դրամական միջոցներ այդ խոշոր և մանր հասարակական կարիքները հոգալու համար, ինչ եղանակով կազմակերպէք գործակալների, վարպետների, ղեկավարների խմբեր ձեր դիտաւորութիւնները իրագործելու համար։

Այդ հարցի պատասխանը բարդ է։ Բայց մի բան պարզ է, որ էական և նպատակայարմար միջոցներից մէկը՝ լուծելու դրված հերթական խնդիրները—դա տեղական ինքնավարութեան կամ զեմստվօի հիմնարկութիւնների մտցնելն է մեր երկրի մէջ։ Եւ հասկանալի է թէ ինչու։ Զեմստվօի հիմնարկութիւնները յանձնում են տեղական ազգաբնակութեան այն բոլոր գործերը, որոնք վերաբերում են նրա տնտեսական, հասարակական կեանքին և այդպիսով հրաւիրում են տեղական գործող ոյժերին գործ դնելու իրանց բոլոր ոյժը, տաղանդը և ջանքերը նպաստելու տեղական կարիքների լիակատար բաւարարութեան։

Զեմստվօն դնում է տեղական ազգաբնակութեան վրա մեծ հոգսեր և մեծ պատասխանատուութիւն, բայց միևնոյն ժամանակ նա տալիս է ազգաբնակութեան ձեռքը գերազոյն ուրախութիւններից մէկը, այն է գործելու իր շրջապատող ազգաբնակութեան օգտին բոլոր եռանդով և ոգևորութեամբ։

Եթէ քաղաքային ինքնավարութիւն մտցնելը նպաստեց մեր քաղաքների բարգաւաճման և հասարակական գործերի բարեփոխութեան, անկասկած զեմստվօի մտցնելը աւելի ևս մեծ ծառայով կարգաւորէ մեր երկրի կեանքը աւելի ընդարձակ տարածութիւնների վրա։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

—

Մի օր լայն ու մեծասիրտ մարդասէր լինել, հետեւեալ օրը նեղլիկ ու կարճատես շովինիստ, մի օր կուրծք ծեծել հանրամարդկային ընդարձակ գաղափարների, լուսաւոր առաջադիմութեան, քաղաքակրթութեան համար, միւս օրը հրապարակով մինչև վերին երկրպագել այնպիսի մի սկզբունքի, որ ամեն քաղաքակրթական և գաղափարական հասկացողութեան բացարձակ, պատմութեան դատաստանով վաւերացրած բացասումն է... Ո՞ւր կարելի է գտնել այդպիսի մի սրտաբաց քամէլիօնութիւն, եթէ ոչ ամեն ինչ ուտող, համբերատար տպագրական թղթի վրա։ Մեր ընթերցողները գիտեն, որ լրագրական այս քամէլիօնութիւնը ամենայն եռանդով շահագործում է Բագուի «Каспій» լրագրի շուրջը հաւաքված թուրք ինտելիգենցիան։ Մենք յաճախ ենք զբաղվում նրանով, գուցէ և չափազանց յաճախ։ Բայց ինչ արած։ Հրապարակական խօսքը մատուցանվում է հասարակութեան և մամուլի պարտքն է նայել տեսնել թէ որքան ժաքուր ու առողջ է այդ կերակուրը։ Տեղական ռուս մամուլի մի քանի օրգանները տարբերներից ի վեր արձանագրել են այն փաստը, որ լուսաւորութիւն, հանրամարդկային գաղափար, խաղաղութիւն և կուլտուրա աղաղակող «կասպիացիների» համար իսկական իդէալը... Թիւրքիան է։ Շատ և շատ անգամ մամուլը ուշադրութիւն է դարձրել այն վայրենի եռանդի վրա, որով «Каспій» պաշտպանում և փայփայում է այն իսկ Թիւրքիան, որ, Գլադստօնի ասելով, մի անէծք է քաղաքակրթութեան համար։ Դեռ նոր էր, որ Բագուի նախկին քաղաքագլուխ, տաղանդաւոր հրապարակախօս Նովիկով ռուսաց մի ամսագրում «Каспій»-ի ճակատին խփեց այդ խայտառակ իրողութիւնը։ Ահա լրագրի մի նոր այդպիսի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՔԻԼԲԱՇԻՆ

V

Հայաթը մտնելուն պէս վաքիլ բաշին ու վաքիլները սարսափելի աղմուկ բարձրացրին։ «Էս ինչ ա,—ասաց տանուտէր Աղասին,—էս քան էլ աղբը կը լինի մի հայաթում. էս հօ երկու ամիս պէտք ա կրվի, որ վերջանայ, տան էսքան էլ երեսի գոմերումը կայ։ Էս հօ տեղովը խուլ ցաւի բուն ա. նաչալնիկը որ էս աղբերը տեսնի, Աւագիմին Սբիր կուղարկի։ Աւագիմ,—կանչեց նա բարձրաձայն տանտիրոջը,—էդ որտեղ ես, ինչ ես թագ կացել. դուրս եկ։ Մատեսի, գրի,—դարձաւ նա գրագրին,—Աւագիմի վրա էս սնաթիս մի պրիտակոլ *) գրի...»։ Այդ բոլորին Աւագիմը դուրս եկաւ գոմերից մինից, որտեղ նա աղբ էր կիտում դուրս տանելու համար։

—Աւագիմ,—դարձաւ նրան Աղասին,—բա ես մինչև հիմա գիտացել եմ, թէ էս գեղումը քեզանից խելօք մարդ չի կայ. դու էդ ինչ բանի ես. էս աղբերը ինչու չես էստեղից ռադ անում։ Բարձր իշխանութեան հրամանը երէկ քո կշտին չի կարդացինք, ա աղբաթիխէը։

—Ես էլ հէնց աղբերի ետևից եմ էլի,—ասաց Աւագիմը,—բա տեսնում չէք. մինչև մի երկու շաբաթը բոլորը դուրս կը տանեմ գեղից։

—Ի՞նչ երկու շաբաթ. երկու օրումը պէտք ա պրծնես, երկու օրումը,—ասաց վճռաբար տանուտէրը,—նաչալնիկը ամեն սնաթ կարող ա գալ. դու ուզում ես որ քո պատճառով իմ տունը քանդվի։

—Մենակ քունը չի քանդվի. մեր տներն էլ կը քանդվեն, որ տաղ անենք,—ասաց վաքիլ Ծատուրը,—Աւագիմ, էլ շատ խօսալ մի,—դարձաւ նա Աւագիմին,—մշակներ վարձի ու էս աղբերը կորցրու էստեղից։

—Ի՞նչ ա, փողդ քիչ ա,—ասաց Դիլոունց Քիքին,—աղբերը շուտով կորցրու էստեղից, թէ չէ պրիտակոլ կանենք ու էս սնաթիս գբրնատուրին կուղարկենք։

—Անունդ սև դաւթարումը կը գրվի,—ասաց Մարութը։

—Հող ու մոխիր կը կորչես, երեխէրդ եթիմ կը մնան,—ասաց վաքիլ Հանէս ամին։

—Լաւ, լաւ. ինչ ասում էք կանեմ, կը կատարեմ,—ասաց Աւագիմը,—իրաւունքը ձերն ա. ես վիճաբանութիւն չեմ անում։ Լուսաբացին մտել եմ գոմը ու դեռ պրծել չեմ. հոգիս դուրս ա եկել, էնքան աղբն եմ թափ արել. սոված մնոնում եմ. դեռ հացի պատառ չեմ կերել էսօրի։

—Բա մենք կերել ենք. մենք էլ չենք սոված սեռնում,—ասաց Գիլոունց Քիքին,—դու լաւ ա քեզ համար ես աշխատում, իսկ մենք հասարակի համար ենք սոված, եկէք գնանք մի պատառ հաց ուտենք,—ասաց Աւագիմը։

—Չէ, ըլիլ չի, անկարելի ա,—ասաց վաքիլ բաշին,—առաջ աղբերդ ռադ արա ու յետոյ մեզ հացի կանչի։

—Ամա աղբաթիխէրի մարդիկ, ռադ կանեմ,—ասաց Աւագիմը,—եկէք մի պատառ հաց կերէք, մի-երկու թաս գինի խմեցէք ու յետոյ ինձ վրա պրիտակոլ էք անում, արէք. իրաւունքը ձերն ա. հասարակի ընտրած մարդիկ էք. ես սկօրիտ *) չեմ անում ձեզ հետ, վիճում չեմ։

—Չէ, ըլիլ չի ասեցի։

—Ո՞նց չի ըլիլ. սոված մնոնում եմ. ինչ ա, հասարակի համար չարչարվիլ պտեմ ու գնամ իմ տանը հաց ուտեմ. չէ, ով ինձ կանչի, նրա տանը պտեմ ուտիլ։ Աւագիմը լաւ ա ասում. տաղ արած առաջ ընկնիմ. գնա—ասաց Ծատուրը, թեթեակի հրելով տանուտէրին։

—Ահը գբրնատուրը կը լսի. սև դաւթարի մէջ կընկնենք,—փորձեց ընդդիմադրել տանուտէրը։

—Լսիլ չի, գնա. շատ մի խօսալ։ Աւագիմի սպիտակ գինիից եթէ ես էսօր չը խմեմ, գիշերս քունս տանիլ չի,—ասաց Ծատուրը։

—Առաջ ընկի, ուզբաշին իր իշխանները լաւ կը պահի։ Էն անդէր փոանգի արաղը սիրաս էրում ու խորովում ա. նրա վրա մի բոլ գինի ածվի, որ հովանայ,—ասաց Մարութը։

Վաքիլբաշին այլ ևս չընդիմադրեց. յանձնաժողովն իր ամբողջ կազմով Աւագիմի ետևից մտաւ նրա տունը։

Սկսվեց կեր ու խումը. մի պատառ հացը ու մի-երկու թաս գինին դարձան կատարեալ ճաշկերոյթ։ Աւագիմը փորձված մարդ էր. նա նախօրօք լաւ պատրաստութիւն էր տեսել. գինին առատ էր ու ընտիր։ Ճաշկերոյթը դարձաւ քէֆ, որը տեւեց մինչև երեկոյ։ Վաքիլները ու նրանց պետը խմում էին Աւագիմի գինին, գովում նրան ու օրհնում նրա տուն ու տեղը։ Մոռացվեց խպառ Աւագիմի հայաթի ու գոմերի աղբը. նրան յայտնեցին, որ իր քէֆին է թողնվում ամեն բան. կարող է մաքրել, երբ հնձից և կալ ու կուտից պրծնի։

—Աւագիմ, շէն կենաս,—ասաց նրան տանուտէր Աղասին տնից դուրս գալիս,—Աստուած օջաղդ ու որդիքդ պահի։ Էս գեղումը եթէ քեզ պէս մի հինգ մարդ ըլէր, ինձ էլ խէր դարդ չէր ըլիր. իսկի։

—Ամա դա ինքը մենակ բոլ ա, բոլ. ես դրա արևին մատաղ,—ասաց Ծատուրը,—տարին քանի անգամ ենք դրա տանը խմում. իսկի մի անգամի էլա Աւագիմի դուռը մեր առաջին փակ տեսած էք։

—Չէ, դրա դուռը միշտ բաց կենայ ու դրա սուփրէն էլ միշտ փռած,—ասաց Մարութը,—ը՛հ, Աւագիմ,—դարձաւ նա վերջինիս,—գեղի աչքի լիսն ես, գեղի. եկ մի պուշտի անեմ քեզ հետ, ա ռաշիդ տղամարդ։

Աւագիմն ու Մարութը գրկախառնվեցին ու հաշտվեցին տաք-տաք։

Աւագիմը սաստիկ զգացվեց սիրոյ ու հաւակրութեան այդ բուռն արտայայտութիւնից։

—Ագա տունը իմը չի. ձերն ա, ձերը,—ասաց նա,—խնդրվում եմ՝ ամեն օր եկէք, կերէք, խմեցէք, քէֆ արէք։ Էս օրվայ քէֆը հէչ. սա, ինց ասեմ, էնչնց մի թիթեռ ներդրծութիւն էր... Լաւ քէֆը մնում ա. սպասեցէք մի Մակին գայ, տեսէք՝ ինց ենք քէֆ անում. մեծ ատենաբանութիւնը էն վախտը պիտի ըլի։

Աւագիմը սիրում էր իր խօսակցութեան մէջ գործ ածել այստեղ-այնտեղ պատահաբար լսած գրականութեան բառեր։ Ունկնդիրների վրա այդ տպաւորութիւն էր գործում։ Մակին գիւղի առաջի հարուստն էր ու Աւագիմի մտերիմ բարեկամը։

—Ամա Մակիի արևին էլ մատաղ, քո արևին էլ,—ասաց տանուտէր Աղասին,—էս գեղի պարծանքը, էս գեղի զարդարանքը դուք էք. դուք, առանց ձեզ գեղը քանդված լաւ ա, քան կացած։

Տանուտէրն էլ հաշտվեց Աւագիմի հետ։

Մթին էր արդէն, երբ «առողջապահիկ» յանձնաժողովի անդամները ուրախ-ուրախ, պատերից բռնելով, ցրվեցին իրանց տները։

(Կը շարունակվի)

---

*) Արձանագրութիւն։

Спорить.

քաղաքագործութիւնն էր։ Նրա աշխատակից Ա. դաեվը կուրծք է ծեծում և աղաղակ է բարձրացնում, որ արաբները համարձակվում են ապստամբվել Թիւրքերի դէմ։ Թէ ինչո՞ւ են ապստամբվել, ի՞նչ են ուզում արաբները և որքան իրաւացի է նրանց դժգոհութիւնը—այդ մասին ոչինչ խօսք չը կայ։ Գլխաւորը ահա ի՞նչ է.

Արաբիան, մանաւանդ նրա սրբազան քաղաք Մեքքան, Մահմէդի օրօրոցը, Քաբէ, սև քարի և «զեամզեամ» սրբազան ջրհորի տեղը, ունի մեծ նշանակութիւն բոլոր մուսիւլմանների համար։ Դա մուսիւլմանական միութեան նշանաբանն է և այն պետութիւնը, որ ունի նրանց իր ձեռքում, ամբողջ մուսիւլմանութեան հոգևոր պետի նման մի բան է դառնում։ Եթէ Թիւրքիայի տեղ լինէր մի ուրիշ պետութիւն, աւելի կենսունակ, աւելի գործունեայ, նա, ի հարկէ, իր այդպիսի դրութիւնից անթիւ օգուտներ կը քաղէր։ Նա, օրինակ, Ա. գլխան մշտական սարսափի մէջ կը պահէր, սրբազան տեղերի հեղինակութեամբ ազդելով անգլիացիների բազմամիլիոն հպատակների վրա Հնդկաստանում և ուրիշ տեղերում։ Թիւրքերը մինչև այժմ չեն շահագործել այդ բարոյական ոյժը, բայց վերջին ժամանակ նրանց մէջ կարծես թէ զարթնում է քաղաքական ագիտացիայի ոգին և գիտակցական վերաբերմունքը դէպի հոգևոր դրդիչ պատճառները ոյժը և դրանց շահագործումը քաղաքական և ազգայնական դիտաւորութիւնների համար։

Այս պատճառով էլ Արաբիան պէտք է ծպուտ հանելու իրաւունք չունենայ։ Արաբները վաղուց վերջացրել են իրանց պատմական դերը, եթէ ի հարկէ պ. Աղաեվին հաւատացող մարդ կը գտնվի։ Պէտք է նրանք հեռանան, տեղի տալով համամօնգոլական իսլամի գաղափարին։ Յոդուածագրի փոքրիկ, միկրոսկոպական լոգիկայով պիտի քաղաքականապէս ջնջվի արաբական ընդունակ ցեղը, որի ընդունակութիւնը պատմութեան մէջ արտայայտվել է հէնց Նրանով, որ Նրա հանճարից է ծնվել իսլամը. իսկ մնացեալ թիւրք ցեղերը, որոնք հազարաւոր տարիների ընթացքում ոչինչ կուլտուրական—քաղաքակրթական ընդունակութիւն չեն ցոյց տուել, պիտի դառնան ամբողջ մուսիւլմանական աշխարհի հոգևոր առաջնորդները։ Եւ այնքան մեծ է Լէնկթեմուրների, Եավուզ-Սէլիմների թոռների իդէալացումը, որ պ. Աղաեվ նոյն իսկ անարգում, հայհոյում է Մէքքայի Շերիֆին լոկ այն պատճառով, որ նա թիւրքերի սարուկը չէ դառնում։

Այժմեան Շերիֆը—Արևելքի ամենազարգացած և հրէշաւոր տիպերից մէկն է։ Նրա սառնութիւնը չափ ու սահման չէ ճանաչում։

Եւ նկատեցէք, Շերիֆը, ճիշդ թէ անճիշդ, Մուհամմէդի սերունդից է համարվում։ Անշուշտ պ. Աղաեվը իր իդէալի, թիւրքական պետութեան մէջ, շատ այնպիսի տիպեր է ճանաչում, որոնք Արևելքի ամենազարգացածն և հրէշաւոր տիպերի թվին չեն պատկանում։ Իդէալը սովորաբար դրախտային կերպարանքով է ներկայանում։ Եւ այդ դրախտը վայելելու համար է, որ պ. Աղաեվը հրճուանքով յիշում է թէ շուտով կը վերջանայ Հէջազի երկաթուղին, որ հնարաւորութիւն կը տայ Թիւրքիային իր երկաթէ թաթը դնել արաբների վրա, փ խաղրել Շերիֆին Ստամբուլ, ի կ Մէքքա ուղարկել իր նահանգապետին։ Այն ժամանակ, ի հարկէ, մուսիւլման աշխարհը կը վերածնվի, բախտի և երջանկութեան դրոնով ներս կը մտնէ սուլթան Համիդի լուսաւոր հոգացողութեամբ։ Եւ Թիւրքիայի բէժիմի սիրահարը բացականչում է.

Պէտք է ճանապարհը, պէտք են կուլտուրան, լուսաւորութիւնը ոչ միայն Թիւրքիայի, բայց և ամբողջ մուսիւլմանութեան համար, եթէ միայն վերջինս չէ ուզում վերջնականապէս անյայտանալ աշխարհի երեսից։

Ահա ինչ սարսափ է սպասում մուսիւլման աշխարհին, եթէ Թիւրքիան բոլորովին չը տիրէ Մէքքային և չը դառնայ աշխարհի մահմեդականութեան հոգևոր գլուխ։ Եւ վաղը նոյն պ. Աղաեվը կը սկսէ մարդկայնութեան, գաղափարականութեան, բարձր հայրենասիրական պաշտամունքների երգերը երգել նոյն այն շ թունքներով, որոնք այսօր Թիւրքերին են օրհնաբանում...

ԲԺԻՇԿ ԳԷՈՐԳ ԿԱՃԿԱՃԵԱՆ

(Նամակ խմբագրութեան)

—

Բոստոն քաղաքի վրա, դեկտեմբերի 15-ին

Շատ տարօրինակ է իմ պէս մէկի՝ օտարութեան մէջ նստածի հոգեբանութիւնը։ Տեղական կեանքը, անձնական առօրեայ հոգսերը անցնում են վրայովս, իբրև մի պարտաւորեցուցիչ եղելութիւն, իսկ սիրտս, հոգիս, վերտանգի, տենչանքի, յոյսի և յուսահատութեան զգացմունքս—այնտեղ են՝ հեռաւոր երկնքի տակ։ Այո՛, այդպէս է լինում, երբ ամբողջ կիսադարեայ կեանքիդ տեղութեան ընթացքում, իբրև մի հինաւուրց ծառ բազմաճիւղ արմատներովդ, սերտ կապված, միացած ես եղել շրջապատող հողի հետ։ Երբ գիշեր ժամանակ զանգդ տալիս են, սիրտդ էլ հետն է զարկում՝ արդեօք մի բութ չէ՞ բերում ինձ հեռագիրը իմ հայրենիքից...։ Երբ լրագիրը բանում ես, շնչապառ արագ հայեացք ես գցում այս ու այն էջի վրա՝ արդեօք չը կա՞յ մի հարուած մեծ կամ փոքրիկ չափով, արդեօք մահվան մանգաղը չէ՞ գլորել մի որ և իցէ թանկագին կեանք։

Ահա այսպիսի զգացմունքով էի բռնված, երբ այսօրվայ «Մշակը» բացի և առաջին երեսումը աչքիս զարկեց՝ «Մեռաւ բժիշկ Կաճկաճեանը»։

Ինչպէս թէ մեռաւ... և ահա յուզված հոգուս մէջ խառնվում են հազար տեսակ միստիքական մտքեր՝ գուցէ չէ մեռել, գուցէ կարելի է կենդանացնել...։ Երևի այդպէս էր հայոց զօրքի տրամադրութիւնը, երբ զուժեցին Արայի մահը։ Այո՛, Արայ զեղեցիկ և բարի՛ բժիշկ Կաճկաճեան իրար չեն հակասում, ունեն մի որոշ առնչութիւն։ Իմ Գէորգն էլ գեղեցիկ էր. գեղեցիկ էր տեսքով, բայց հոգու գեղեցկութիւնը ուղղակի անհասանելի էր, արտայայտվում էր նրա հնչուն, համակրելի ձայնի մէջ, նրա փայլուն, խորափայլ, աղու աչքերի մէջ, նրա քաղցր ընաւորութեան մէջ, նրա բարձր, վսեմ բարոյական գաղափարների մէջ։ Նա իր կեանքը չեմ ասում պատրաստ էր զոհել, այլ զոհում էր ի սէր մերձաւորի. Քրիստոս ինքն էր, որ բնակում էր նրա անարատ և միամիտ, իբրև աղաւնի սրտի մէջ։ Բժիշկ Կաճկաճեանի հոգին զուտ բիւրեղ էր։

Ո՛չ, ո՛չ, Կաճկաճեանը չէ մեռել, մեռելութիւնը չէ ներդաշնակում Կաճկաճեանի հետ. նա կեանք էր, նա յոյս էր... կեանքը մեռած, յոյսը—մեռած՝ ես ինքս քանի կենդանի եմ, չեմ կարող հաշտվել դրա հետ։

Գէորգի կեանքը անցաւ իմ աչքիս առաջ, անցաւ, իբրև բեմի վրա ներկայացրած Շեքսպիրի մի ողբերգութիւն։ 73 թուականն է, Պետերբուրգ ենք, բժշկական ճեմարանի ուսանողներ. հանդիպում եմ հարիւրաւոր ուսանողների. Կաճկաճեանն է, որ իմ բոլոր սիրտս դէպ իրան է գրաւում։ Նա իր ամբողջութեամբ հրաշալի է. դասընկեր ենք դառնում, այդ օրվանից մէկդմէկուց անբաժան ենք, յաղթահարում ենք բժշկական գիտութեան անթիւ ու անհամար ճիւղերը, սիրասին ընութիւններ ենք տալիս։ Գէորգս հայկական ներկայացման զարդն է, երբ Պետերբուրգը առաջին անգամը տեսաւ իր մէջ հայկական թատրոնական բեմ։ Գէորգս Արշակ թագաւորն է, Գէորգս Պէպո է, բայց նա և Մոլիեռի Զգաստարէլ է։ Կոմս Սօլլագուբը հիացած է Կաճկաճեանի տաղանդի վրա. մտէք, յորդորում է նրան, մտէք բեմական ասպարէզ, ես ձեզ խոստմն ընդունել կը տամ Կայսերական թատրոնը։

Բայց ես շլացած էի, հիացած էի Գէորգի բարոյական մաքրութեամբը, հոգու անարատութեամբը և ժողովրդասէր, անձնուրացութեան հասած նրա բնաւորութեամբը։

Կաճկաճեանը Կաղզուան է, մի յետ ընկած տեղում, բայց, ինչպէս պ. Խաժակը նկատում է իր Կաճկաճեանին նուիրած գեղեցիկ և սրտառուչ յօդուածի մէջ, նա, բժիշկը ուրախ է, որովհետև «նա այնուհետև անմիջական յարաբերութեան մէջ է իր սիրած ռամիկի, իր զուրգուրած ժողովրդի հետ»։

Կաճկաճեանը այսպիսով իր սքանչելի հոգու և բեղմնաւոր գործունէութեան գահը կաղզուանի մէջ դրեց։ Կաղզուանը, անշան Կաղզուանը բացեց իր մէջ Կովկասեան հայոց Բարեգործական ընկերութեան ճիւղը, Կաղզուանում եռաց կեանքը և այդ կեանքի ծնողը և մնուղ մատակարարողը բժիշկ Կաճկաճեանն էր։

Բայց ի՞նչ էր անում բժիշկ Կաճկաճեանը։ Զը նայած սահմոգի բամբասողներին, Կաճկաճեանը չէր գործում և ոչ էլ քարոզում գործել ոչ սրով և ոչ հրով. նա խաղաղ կուլտուրայի հագցված զինուոր էր, նա մի անարծաթ բժիշկ էր, նա մի հայ ու քրիստոնեայ մարդ էր խօսքի ամենալաւ, ամենավսեմ մարդով։

Բայց ես վերևն ասեցի, որ ես չեմ կարողանում հաւատալ, թէ Կաճկաճեանը մեռաւ. չ՛թէ այնքան կարճ է մարդու կեանքը. Կաճկաճեանը ուսանող, Կաճկաճեանը բժիշկ, ժողովրդի բարեկամ, նա գործում է, այրվում է, տապակվում է գործունէութեան ծարաւով. նա հեռու հորիզոններ է որոնում, նա դեռ շատ հեռու է իր նպատակից՝ բարեբաղդ տեսնել իր սիրելի կաղզուանցուն, տեսնել այնպէս ինչպէս նա ուսել էր գրքերով, մարսել էր ուղեղով, տեսել էր աչքով, երբ նա արտասահման էր։ Կաղզուանցու մէջ նա ուզում էր տեսնել ուսումնականին, իբրև ուսումնական, երկրագործին, իբրև երկրագործ, քաղաքացուն և գիւղացուն՝ իւրաքանչիւրին արժանի իր կոչմանը և բոլորին համակված մի ցեալ սրտով առ բարին և առ ազնիւ մարդկայինը։ Եւ ի՞նչու պէտք է մեռնեն Կաճկաճեանները, այդ սրբազան հրոյ անօթները, երբ դեռ անապատները անմշակ են, ժայռերը յանդուգն...

Գէորգը յիսունը նոր էր անցել, բայց այնքան բուռն էր եղել նրա հոգու աւիւնը, այնպիսի անխնայ առատութեամբ, անգամ շռայլութեամբ ցանել էր նա իր որդիական սէրը և հայրական խնամքը շրջապատող ժողովրդի վրա, ոչ նրա մարմնականը գզվել, ցնցոտի էր դառել և նա նմանվել էր Թագաւոր Լիրին, որը իր արքայական ամբողջ հարստութիւնը բաժանեց իր զաւակների մէջ և ինքը մնաց աղքատ, անպատսպար, թափառական, խելացնոր...։ Այո՛, Գէորգիս մարմնայինը չէր դիմացել նրա հոգու բուռն զօրութեանը և նա, անմահ Գէորգը իր երիտասարդ հոգովը ձեզ ներկայացնում էր, իբրև մի զառամեալ ծերունի, գողդոջուն ձեռքերով...

Բայց հոգին միշտ երիտասարդ, միշտ և յաւէտ ծարաւի հասարակական ազնիւ գործունէութեան և Կաճկաճեանի երանելի հոգին ամենայն իրաւամբ կոչ է կարդում ընտրեալներին ասպարէզ գալ և բռնել նրա տեղը։

Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՇՈՒՇԵՑԻՆԵՐԻ ՈՂԲԸ

—

Ողբ, որը նսեմացնում է նոյն իսկ Խորենացու պատմական հռչակված ողբը։ Օգնեցէք, վրա հասէք, փրկեցէք։ Մենք կորչում ենք հոգեպէս և բարոյապէս։ Մենք զուրկ ենք մեր հոգևոր պիտոյքները հոգացողից։ Մենք անտէր, անպաշտպան «եթիմ» ենք մնացել...

Այսպէս է կոչում շուշեցին «Մշակի» № 281 ում՝ Շուշուց մի քահանայ Բագու տեղափոխելու համար։

Ուզում ես առաջին անգամից հաւատալ Շուշեցու այդ ողբին, որ իր հոգու փրկութեան յետեւից ընկած Բագուում ապրող շուշեցին կարօտ է մի հոգևոր մխիթարողի։ Բայց մի ներքին ձայն կոկորդը սեղմում է. կաց, սպասիր, խելքդ հօ հաց ու պանրով չէ՞ս կերել։ Մի՞թէ Բագուի քահանաների մէջ չը կայ շուշեցի։ Մի՞թէ անպատճառ հարկաւոր է, որ «հոգևոր հայրը»՝ իր հոգու փրկութեան կարօտ մարդու զեմլեակը լինի։—Կամ, վերջապէս, մի՞թէ Բագուում ապրող ո՛չ թէ շուշեցի, այլ որ և է ուրիշ տեղացի, բարեհաճում է իր քահանաների, եկեղեցու, նրա սպասաւորների մասին մտածել, հոգալ, նրանց նշանակութիւն տալ։

Այլապէս չէր լինի մի նեղլիկ, գիւղական եկեղեցիների նման եկեղեցի, Բագուի եկեղեցին, իր ամենաաններդաշնակ երգեցողութեամբ։ Իր, մեծ մասամբ, տգէտ քահանաների խմբերով, իր կիսակուշտ, կիսաքաղցած տիրացուներով, և վերջապէս իր անզարդ տաճարով։

Անհերքելի, նոյն իսկ շուշեցիների աչքերը ծակող, իրականութիւն է, շուշեցիների, որոնք այժմ որոշել են մտածել իրանց հոգու մասին, Ղալայի և Թոփխանի քահանաների աննախանձելի վիճակի մասին։

Ինչ պարադոքս է սա։

Շուշեցիները, իբրև հայութեան մի կտոր, ուզում են ապացուցանել, որ նրանք ընդունակ են հայ քահանայի վիճակով լուրջ կերպով զբաղվել։

Մի բան, որ հայութիւնը երբէք չէ արել, մի բան, որ հայ ժողովուրդը միշտ իր բացասական կնիքն է դրել նրա համար։

Ստեղծել քահանաների պրոլետարիատ. ստեղծել՝ սոցիալական պայմաններից դրդված, բաշիբոզուկ քահանաների դասակարգ։

Եւ այս բոլորից յետոյ, թող ներվի ինձ, Շուշեցու սրտացաւութիւնը փարիսեցիութիւնից դէնը չէ անցնում։

Մենք ենք ձեռնադրել տուել նրանց, մեզնից նրանք պէտք է օգուտ ստանային, մենք եկել ենք, նրանք մնացել են,—ասում են շուշեցիները։

—Ո՛չ, դուք չէք ձեռնադրել տուել, այլ իրանք, իրանց խնամիներով հանդերձ։

Հայ ժողովրդի կամաւոր կերպով գիտակցութեամբ քահանայացու ընտրելը նորագոյն բացառութիւնների թւումն է, իսկ դրանց մէջ չէ մտնում Շուշին։

Վերջապէս ինչո՞վ էք ապահով, որ այդ փոխադրված քահանայի փոխարէն Շուշում երկու նորը չեն բանի և աւելի վատթարացնի եղածների վիճակը։

Քահանան հօ տան ապրանք չէ։ Նա հօ սընդուկ, մսֆրաշ կամ խուրջին չէ, որ քարշ տաք ուր կամենաք։ Նա հօ գնդակ չէ, որ գլորէք ինչպէս կամենաք։ Վերջապէս ո՞ր քահանային պիտի բերէք, որ արդարութիւնը պահպանված լինի և ոչ խախտված։ Զէ՞ որ նրանք բոլորը ձեր յոյսով են ձեռնադրվել։ Վիճակ պիտի գցէք նրանց մէջ։

Զեն բերում իրանց չարուխները, տախտերը ու «եալովոնակները։»

Զեն բերում Բագու իրանց այաններին։

Ուզում են բերել իրանց քահանային։

Զեն բերում իրանց «աղաթները», շուշեցու դրական յատկութիւնները։

Ուզում են բերել քահանաներին։

Շուշեցիներ, ես հաւանում եմ ձեր ազգասիրութիւնը, կամ աւելի ճիշդը՝ ձեր հայրենասիրութիւնը, որ ուզում էք անպատճառ ձեր հոգևոր պէտքերը հոգացող քահանայի հոգաթափերը Թոփխանի փոշով ծածկված լինի և նրա սուրբ ձեռքը՝ ձեր հայրենիքի թթու աղբիւրներից թրջված լինի։

Ծիծաղելի է դա։

Ձեր, յիրաւի, գոյնը գցած հայրենիքը ձեզ կարօտում է. նա քամվել, մաշվել է։ Նա կարօտ է ձեր կարեկցութեանը և երախտապարտութեան պտուղներին, նա ճիշդ է, ձեզ սպասում է։

Օգնեցէք նրան իրականապէս, ոչ ծիծաղելի պլատոնական զգացմունքով, և այն ժամանակ գովելի և ուշադրութեան արժանի կը լինի ձեր ազգասիրութիւնը և հայրենասիրութիւնը։

Իսկ մինչ այդ, ձեր ողբը, անտեղի և ծիծաղելի,—կը մնայ կատակների շարքում...

Ռ. Յովհաննէսեանց

ՆԱՄԱԿ ԿՈՂԲԻՑ

—

Դեկտեմբերի 2-ին

Ամբարատէր վաճառականների անցեալ 1903 թուականին հաւաքած գարիները, շնորհիւ կողբից երկաթուղու Աբաքս կայարանը աղ արտահանող մեծաքանակ ֆուրգօնների ձիերի, վերջացան հէնց գարնան սկզբին։ Թուրք, քուրդ ազգաբնակութիւնը, որը միշտ ցորենի փոխարէն գարի էին ուտում, այս տարի տեսնելով գարու թանգութիւնը, սկսեցին ունեցած գարիները վաճառել և ցորեն ձեռք բերել. շրջակայ գիւղերի բերքը ազգաբնակութեանը բաւականութիւն չը տալու պատճառով գիւղացիների ունեւոր դասակարգը ստիպված եղաւ աւելի հեռու տեղերից իրանց ուտելու հաց ձեռք բերել. բայց չը նայելով հեռու տեղերում ցորենի էժանութեանը, այնու ամենայնիւ, ճանապարհածախսերը վրա գալով, հազիւ կարողացան աւելի թանգ գներով այն էլ քիչ քանակութեամբ իրանց համար հաց առնել. իսկ մեծամասնութիւնը, աղքատ դասակարգը ներկայումս նոյն իսկ հաց չունի ուտելու։

Ներկայ տարին էլ առատ չէր ցորենը, գարին սակաւ, բամբակը, որ տեղական արդիւնաբերութեան ամենագլխաւոր ճիւղն է կազմում, գինը ընկած, կենսական մթերքները սովորականից կրկնապատիկ աւելի գնով. առատուրը, բառի բուն իմաստով, կանգ է առել, կողմնակի աշխատանքների դուռը փակված ամեն տեղ, գիւղացիք տարին բոլոր ձեռքերը ծալած անգործ էին մնացել։ Կասես թէ այս բոլորը քիչ էր, բնութիւնն էլ իր արհաւիրքով ուղեց պատժել նրանց. մի կողմից երկու ամիս անդադար տեղացող անձրևները սարերում, իսկ միւս կողմից շուտ վրա հասնող դաժան ձմեռը դաշտերում անագին վնասներ պատճառեցին. առաջինը արգելք հանդիսացաւ իր ժամանակին ցորենի, գարու հնձելուն և օրինաւոր կալսելուն, իսկ երկրորդը դեռ բամբակի արտերի կէսը չը հաւաքած, սպիտակ սաւան փռեց նրանց վրա. այժմ, թէ մէկը, և թէ միւսը մնում են գարնանը։

Բայց, չէ՞ որ մինչև գարուն, ինչպէս ժողովրդական առածն է ասում «հազար դանակ կայ փորին» կամ պէտք է դէղեր դրած հացահատիկները խուրձերի մէջը ծիլերը արձակելով փչանան, կամ թէ դաշտերում փռված բամբակները ձմեռը արածող ոչխարների ոտքերին զոհ դառնան ու հողագործների մէջքը կոտրեն։ այսպիսի տարին, ինչ խօսք, նպաստաւոր է վաշխառուների և հարուստ ամբա-

բատէրէրի համար, որոնք օր առաջ հացերը կալսելու ժամանակ մի քանի արշին չիթ տալով՝ գիւղացու ունեցածը լցրել են իրանց ամբարները։ Կողքում էլ պակաս չէ նրանց թիւը։

Ներկայումս անտանելի է դառել ժողովրդի դրութիւնը։ անտանելի է մանաւանդ այն պատճառով, որ դեռ ձմեռը նոր է սկսվում, դեռ ձիւնախաղը բուրը նոր է թակում գիւղացու անշուք խրճթի դուռը և նրա ճեղքերից անցնելով գնում են օձի նման փաթաթվելու ճտիկների պարանոցին և խեղդամահ անելու նրանց, հէնց այս կրիտիկական օրերում ոչ ձմեռվայ ուտելու մի կտոր չոր հաց, ոչ մերկ անդամները ծածկելու շոր, և ոչ էլ՝ նոյն իսկ անհրաժեշտ պահանջները—արքունական հարկը վճարելու մի սև գրոշ ունեն։

Զը նայելով որ խալերան մտել է քիմներիս տակը, բայց որ գիւղացուն ուզում ես հասկացնել սպառնացող վտանգի մասին և խորհուրդ ես տալիս տուն ու դուռը մաքուր պահել, նա յուսահատական հառաչանքով քեզ պատասխանում է՝ «Օ՜ֆ, ի սէր Աստուծոյ, թողէք ձեր խրատները, որ ուտելու հաց չունենք լաւը նա է, որ մի քանի օր առաջ մեռնենք»։

Ընդհանրապէս մխիթարական ոչինչ չը կայ կոդ։ որ կողմը ուզես նայիր, կը տեսնես ցուրտ դարդի, տանջանքի և ընտանեկան հոգսերի մէջ թաղված մարդկանց։ Նոյն իսկ այս տարի, գուցէ և շատ ու շատ տարիներ հոգեկան մխիթարութիւնից ժողովուրդը զուրկ մնայ շնորհիւ այն բանի, որ հին եկեղեցին կիսաւեր լինելու պատճառով, կառավարութիւնը արգելել է ժամասացութիւնը, իսկ նորը չեն կարողանում կառուցանել մի կողմից չքաւորութեան, իսկ միւս կողմից հինգ տարի առաջ հասարակութիւնից նոր եկեղեցու շինութեան համար ընտրված հոգաբարձուների միմեանց հետ լաւ յարաբերութեան մէջ չը լինելու պատճառով։ Կ. Գ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Պարիզ, դեկտեմբերի 14 27-ին

«Մշակի» ներկայ տարվայ 252 համարում տպագրված էին «Արարատի» սինոդի օրագրութիւններից քաղված յետագայ տողերը։

«Օգոստոսի 4-ին Սինոդը լսելով Մեսրոպը քահանայ Մելեանի գործը, որ պահանջում էր սինոդից 700 բուբլի իր թեմական տեսչութեան ժամանակից մնացած 1333 ր. 33 կոպ. ռոճկի տեղ վճռեց տալ դատաստանական մասը քննելու, որպէս զի տրվի ի դատ մարմնաւոր իշխանութեան, համարելով նրա յայտարարութիւնը № 56 զրպարտութիւն և միանգամայն անպատուաբեր Սինոդի համար։»

Որ իմ № 56 յայտարարութեամբ արած մեղադրանքը սինոդի անդամների վերաբերութեամբ՝ «միանգամայն անպատուաբեր»-ից էլ աւելի էր—շատ պարզ էր, բայց որ այն նրբ մարտութիւն էր թէ զրպարտութիւն՝ պիտի ասէր «մարմնաւոր իշխանութեան դատը», այլ ոչ սինոդը—սա էլ պարզ էր։

Այն ինչ ես սպասում էի, որ Սինոդը կատարէր իր վճիռը, ստանում եմ գործակալից պաշտօնական մի գրութիւն, 1-ն հոկտեմբերի 1904 թ. № 793, որով գրում է ինձ, թէ Թիֆլիսի կոնսիստորիան իր № 3983 գրութեամբ պատիրում է ինձ ծանուցանել ձեզ, որ Սինոդը իր դատաստանական մասի զեկուցումը լսելուց յետոյ՝ «վճռել է կարեցել ձեզ վրա բարդած մեղադրանքը»։ Իսկ ոչ թէ 700, այլ 1333 ր. 33 կ. ռոճկից մնացածը լրիւ արդէն ստացած եմ։

Մեսրոպ աւագ քահանայ Մելեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Մշակի» ներկայ համարը, յայտարարութիւնների շատութեան պատճառով, բաղկացած է 1½ թերթից։

—

Անցեալ տարիների օրինակով բժշկապետ Յովհաննէս Գասպարեան ուղարկել է մեզ հարիւր բուբլի, որպէս զի այդ գումարով առաջիկայ 1905 թուականին ուղարկենք «Մշակ» լրագրի տասն օրինակ դպրոցների, գրադարանների կամ չունևոր գիւղական հասարակութիւնների։ Ժամանակին մենք կը յայտնենք թէ ում ենք ուղարկել այդ օրինակները։

—

Դեկտեմբերի 24 ին առաւօտեան թոքերի բորբոքումից վախճանվեց Թիֆլիսում յայտնի անկնաբոյժ Գ. Տարսաիձէն։ Հանգուցեալը արդէն մի քանի տարի ենթակայ էր հոգեկան հիւանդութեան և նրա բազմաթիւ հիւանդները զրկված էին իրանց սիրելի բժշկի հոգատար խնամքից։ Ով երբ և իցէ առիթ է ունեցել բժշկվել հանգուցեալի մօտ, նա երբէք չի մոռանայ նրա վերին աստիճանի քաղցր, մարդասէր և ուշադիր վերաբերմունքը դէպի բոլոր հիւանդները, թէ դէպի հարուստները և թէ դէպի աղքատները։ Տարսաիձէն Խարկովի յայտնի պրոֆէսոր ակնաբոյժ Հիրշմանի ընդունակ աշակերտներից էր և ոչ միայն Թիֆլիսում, այլ և ամբողջ Կովկասում յայտնի ակնաբոյժի հռչակ էր վայելում։

—

Թիֆլիսի քաղաքային վարչութեան յատուկ յանձնաժողովը, կազմված տեխնիկներից և ատենադպիրներից, քննելով էլէքտրաքարշի Երևանեան, Սաղի և Վերայի գծերը, գտել է բաւարար։ Նոյն իսկ ամենախիստ թեք տեղերում վագօնը կանգ էր առնում համարեա վարկենաբար։ Յանձնաժողովը գտնելով պայմանները բաւարար, որոշեց թոյլատրել այդ գծերի վրա էլէքտրաքարշի շարժումը։

—

Առաջիկայ տներին աղքատներին բաժանելու համար ստացանք 1) տիկին Ե. Մատթէոսեանից 3 բուբլի և 2) Իրկուտսկից, Յ. Տէր-Յարութիւնեանից 5 բուբլի։

—

Յիշեցնում ենք, որ այսօր, կիրակի, դեկտեմբերի 26 ին, Թիֆլիսի Ժողովարանում կը կայանայ Պ. Կարա-Մուրզայի համերգը, բաւական ճոխ ծրագրով։ Համերգի արդիւնքը պէտք է յատկացվի հանգուցեալ Բ. Կարա-Մուրզայի որբերի օգտին։

—

Վերջին օրերս Թիֆլիսում բացվեց մի նոր գեղեցիկ հիմարկութիւն—դա նորերս վախճանված երիտասարդ վրացի իշխան Յովսէփ Պորֆիրովիչ Բարաթովի յիշատակին հիմնված մանուկների ապաստան է։ Այդ հաստատութեան իրականացնողը հանգուցեալի մայրն է, իշխանուհի Ա. Ի. Բարաթովան։ Ապաստանը հիմնված է 30 աղքատ երեխաների համար, առանց ազգութեան խտրութեան։ Երեխաները լինելու են միջնակարգ դպրոցների սաներ։ Ապաստանում նրանք ստանալու են տաք, առողջարար կերակուր, հանգստութիւն, խաղալու տեղ, երեկոյեան թէյ, հետևեալ օրվայ դասերը պատրաստելու համար լուսաւոր, տաք ու մաքուր սենեակ, նրանց վրա հսկող մի փորձված վարժուհի դասերին օգնելու համար։ Ապաստանը գտնվում է Բէրութեան փողոցում, Ղորղանեանի տանը։

—

«Նով.» և «Русь» լրագիրների հաղորդած տեղեկութեան համեմատ, Պետերբուրգի քաղաքապետ գեներալ-ադիւտանտ Ֆուլլոն վերացրեց իր նախորդի՝ գեներալ-ադիւտանտ Կլէյգելսի կարգադրութիւնը, որով ոստիկանութիւնը իրաւունք ունէր, փողոցային անկարգութիւններին վերջ տալու համար, օգնութեան կանչել դռնապաններին իրանց տների շրջանից դուրս։

—

Մամուլի օրէնքների վերաքննութեան գործով զբաղված է մինիստրների կոմիտէի անդամ կոմս Սոլսկին։ (Нов. Об.)

—

Դեկտեմբերի 23-ին տեղի ունեցաւ Թիֆլիսի Արտիստական Ընկերութեան ընդհանուր ժողովը, որը քննեց շէնք վարձելու հարցը։ Առաջիկայ յունվարի 1-ին լրանում է ներկայ շէնքի պայմանաժամը և շինութեան տէր «Փիթոյեան և ընկ. առևտրական տունը» նոր պայմաններ է առաջարկում. 1) Թատրոնը կապալով տրված լինելով տիկին Մ. Ի. Բէլեցկուն, շինութիւնը տրվում է առանց թատրոնի և 2) շինութեան միւս բոլոր մասերը տրվում են տարեկան 12,000 բուբլով։ Ժողովը քննելով այդ պայմանները, որոշեց ընդունել և վերանորոգել իր պայմանագիրը։ Աւելորդ չենք համարում յայտնել, որ թատրոն վարձողը մեր ընթերցողներին արդէն յայտնի տիկին Բելեցկայան է, որին Թիֆլիսի Հայոց Դրամատիական ընկերութեան ընդհանուր ժողովը այս աշնանը միաձայն ընտրեց ընկերութեան վարչութեան անդամ։ Տիկինը արդէն շաբաթական մի օր խոստացել է տալ թատրոնը հայոց ներկայացումների համար ամեն անգամին 200 ր. վարձով, իսկ երկրորդ օրվայ համար խոստացել է տալ չափաւոր գնով, յամենայն դէպս ոչ աւելի քան անցեալ տարվայ վարձը—այսինքն 280 ր.։

—

Պետերբուրգի երդուեալ հաւատարմատարների մէջ, ասում է «Р. Сл.» լրագիրը, միտք է յղացել հիմնել ամբողջ Ռուսաստանի իրաւաբանների ընդհանուր դաշնակցութիւն։

—

Մինիստրների կոմիտէտը,—ինչպէս հաղորդում է «Русь» լրագիրը,—դեկտեմբերի 12 ին Բարձրագոյն ուկազի ցուցումները կեանքի մէջ մտցնելու համար պրոգրամներ որոշելուց յետոյ կը սկսէ իր զբաղմունքները այս օրերս։ Մտադրութիւն կայ մինչև տոները կայացնել մէկ նիստ։ Երկրորդ նիստը—դեկտեմբերի 28 ի և 31-ի միջև։ Աշխատանքը մտադրութիւն ունեն աւարտելու յունվարի վերջին թուերից ոչ ուշ։ Այդ ժամանակամիջոցում կը մշակվեն պրոգրամներ ուկազի բոլոր կէտերի վերաբերմամբ, բացի այն հարցերից, որոնց կանոնաւորման համար հարկաւոր է մանրամասն քննութեան ենթարկել ստատիստիական նիւթ և գործերի դրութիւնը տեղի վրա։ Մի քանի կէտերի վերաբերմամբ աշխատանքները շուտ և աւելի աջող աւարտելու համար, օրինակ 6 դ և 7 դ կէտերի վերաբերմամբ,—օտարացեղների և օտարադաւանների մասին,—և 6-դ կէտի վերաբերմամբ,—մամուլի մասին,—վճռված է հանել կոմիտէտի զբաղմունքի առարկաների թուից և նոյն կոմիտէտի անդամներից առանձին յանձնաժողով կազմել։ Կոմիտէտի զբաղմունքները վերջանալուց յետոյ մերձակայ ժամանակում վերջնական լուծումն կը ստանայ 4 դ կէտում նշանակված հարցը, — բանուորների ապահովագրութեան մասին,—և 5-դ,—խստացրած հսկողութեան վերաբերեալ կանոնադրութիւնը վերացնելու մասին։ Հէնց առաջին նիստում կը մտցնվի այն հարցը, թէ հարկաւոր է առանձին յանձնաժողով կազմել և հրաւիրել այդ յանձնաժողովին մասնակցելու համար յայտնի հասարակական գործիչներին խորհրդակցական ձայնի իրաւունքով։

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան գիտական կոմիտէտի մշակած նախագիծը՝ արական գիմնազիաների բէգիրոմի վերաբերմամբ, մինիստրութիւնն ուղարկել էր ուսումնարանական շրջանների հոգաբարձուներին՝ նրանց կարծիքն իմանալու համար։ Այս օրերս այդ կարծիքները ստացված են և, ինչպէս հաղորդում է «Русь» լրագիրը,—հոգաբարձուները սկզբունքով դէմ չեն նախագծին։ Ներկայումս աշխատանքները մինիստրութեան մէջ եռանդով առաջ են ընթանում և երևի գարնան նստաշրջանին նախագիծը կառաջարկվի պետական խորհրդի քննութեանը։ Նախագծի հատկանշական, մտադրութիւն կայ երկու տիպի գիմնազիաներ ունենալ. 1) պարտաւորական լատիներէն լեզուով, որի դասաւանութիւնը կը սկսվի երրորդ դասարանից, և ոչ պարտաւորական՝ յունարէն լեզուով և 2) պարտաւորական երկու լեզուներով։ Թէ մէկ և թէ միւս տիպի գիմնազիաները ունեն ութ դասարան, բայց նախագիծը թոյլ է տալիս վեց դասարանեան գիմնազիաների գոյութիւնը։ Վեց դասարանեան գիմնազիաների նախագիծը սերտ կապ ունի նախագծվող նախապատրաստական դպրոցների գոյութեան հետ։ Երկու կրտսեր դասարանները երկու տիպի գիմնազիաներումն ևս կատարելապէս համանման են։ Տարբերութիւնը սկսվում է երկրորդ դասարանից։ Նախապատրաստական դպրոցները կատարելապէս կը համապատասխանեն գիմնազիայի առաջին երկու դասարանների պրոգրամին։ Այդպէս անուանված վեցդասարանեան գիմնազիաները սովորական գիմնազիաներ կը լինեն, միայն առանց երկու ստորին դասարանների, այնպէս որ այդպիսի գիմնազիաների առաջին դասարանը մտնելու համար հարկաւոր կը լինի նախապէս անցնել նախապատրաստական դպրոցի դասընթացքը։ Նախապատրաստական դպրոցների բանալը ծառայութիւն կը մատուցանէ զուտ դաստիարակչական տեսակէտից ևս։ Այդ դպրոցներում խրճվում են փոքրահասակ երեխաներ, մի բան, որ մի յայտնի աստիճան կը հարթէ սաների խիստ տարբերութիւնը հասակի կողմից։ Նախապատրաստական դպրոցն աւարտելուց յետոյ գիմնազիա մտնելու համար քննութիւններ չեն լինելու, բայց վկայականների պակասութեան և գիմնազիա մտնել ցանկացողների թուի շատութեան պատճառով մրցական քննութիւններ կը սահմանվեն, եթէ միայն միջոցներ ձեռք չեն առնվի պահանջված թուով միջնակարգ դպրոցներ բանալու համար։ Մինիստրութեան նախագիծը մեծացնում է դասատուների թիւը գիմնազիաներում։ Ինչ վերաբերում է բէալական դպրոցներին, նրանց համար ոչինչ բէֆորմներ չեն պատրաստվում։ Լրագիրներում տպված այն լուրը, թէ բէալական դպրոցների աշակերտների համար կը բացվեն համալսարանի դռները, ինչպէս հաղորդում են հեղինակաւոր աղբիւրից, ոչինչ բանի վրա հիմնված չէ։

—

Եարօսլաւից գրում են «Р. В.»-ին դեկտեմբերի 6 ից. «Պուշկինեան հասարակական գրադարանի ընդհանուր ժողովը միաձայն որոշեց դիմել և յայտնել՝ սովորական կարգով՝ ում հարկն է, որ անհրաժեշտ է թոյլ տալ գրադարանում ունենալ այն բոլոր գրքերը, որոնք լոյս են տեսնում։—Գրադարանի վարչութիւնը մի տեսակ քննութիւն կամ աճfks էր կազմել և ընթերցողներից մօտ 300 հոգի պատասխան էին տուել, թէ ինչ լրագիրներ և ամսագիրներ են ցանկանում ստացված տեսնել գրադարանում։ «Р. В.»-ի համար ձայն էին տուել 277 հոգի, «Р. С.»—274, «Русь»—258, «Право»—249, «Наш. Ж.»—231, «Нов. Вр.»—180, «Моск. Вѣд.»—90, «Гражд.»—65։ Ամսագիրներից ստացել էին՝ «Рус. Бог.» և «Міръ Божій»—283 ձայն ամեն, մէկը «Рус. Мысль»—273, «Вѣст. Ев.»—247, «Образов.»—243 և այլն»։

—

Ախալքալաքի գաւառի ԽԱՆԴՕ գիւղից մեզ գրում են. «Սրանից մի քանի օր առաջ վեց ծալկացիներ, որոնք գաւառից ձիաներով գարի էին տանում իրանց թշուառ ընտանիքի գոյութիւնը պահպանելու համար, «Դալի-Դաղ» կոչված սարերի ստորոտին, որտեղից անցնում է ճանապարհը, խիստ բուքի բռնվելով, կորցնում են ճանապարհը և երկար ժամանակ թափառում այդ անմարդաբնակ սարերում, մինչև որ բոլորն էլ ուժասպառ թափվում են սառը ձիւնի վրա։ Ինչպէս լինում է, մէկին աջողվում է առաջ անցնել և մի կերպ հասնել առաջին գիւղը մէջ գիշերին։ Նա իմաց է տալիս պատահածի մասին։ Գիւղի երիտասարդները խոզոյն և եթ օգնութեան են գնում. բայց, դժբաղդաբար, արդէն ուշ է լինում. չորսը իրանց ձիերով սառած են լինում, իսկ մինը դեռ կենդանի, որը նոյնպէս փոքր ժամանակից յետոյ մեռնում է։ Այս առաջին դէպքը չէ, որ պատահում է այդ ճանապարհին և ոչ էլ վերջինն է լինելու, քանի մենք զուրկ ենք ինքնապաշտպանութեան գիտակցութիւնից. չէ անցել մի տարի, որ այդ ճանապարհին մարդկանց մի քանի զոհեր չունենանք։ Անասունների մասին աւելորդ է գրել, հարիւրներով է պատահում. վերևը յիշված օրը 50 հատ էլ ոչխար էր սառել։ Բայց միթէ չէ կարելի դրա առաջն առնել, չէ կարելի այդ պիտանի ճանապարհը անվտանգ դարձնել։ Կարելի է և այն էլ շատ հեշտութեամբ. նախ՝ վտանգաւոր տեղի տարածութիւնը երկար չէ, 5 վերստից ոչ աւելի։ Բաւական է ամենավտանգաւոր տեղում, այն է «Թիքաներում» մի խրճիթ շինել և արդէն վտանգը անցած է։ Այդ խրճիթը իրրև փարոս կը ծառայէ բոլոր ճանապարհորդների համար, իսկ հարկաւոր դէպքում կը կարողանան այնտեղ գիշերել։ Հրաւիրում ենք ձեռնհաս անձանց ուշադրութիւնը այդ բանի վրա»։

—

ԼԱՅՑԻԴԻՑ մեզ գրում են. «Այստեղի ուսանողների ընդհանուր թիւը 24 է. հաժալսարանի ուսանողների թիւը հասնում է 14 ի. իսկ մնացածները տեղիս վաճառականական դպրոցումն են։ Ի դէպ յիշենք, որ հաժալսարանի ուսանողներից շատերը այս սեմեստրի սկզբին վաճառականական դպրոցումն էին, սակայն սեմեստրի կիսին, ընդհատելով իրանց ուսումը վերոյիշեալ հաստատութեան մէջ, մտան համալսարան, կորցնելով 100 մարկ, որը մտնելու վարձ է եղել տրված։ Հաժալսարանի ուսանողներից սովորում են՝ 6 հոգի գիւղատնտեսութիւն, 5-ը բժշկութիւն, 2-ը քիմիա և մէկը փիլիսոփայութիւն»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍԻԼԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀՈՒՐՉԸ

—

Ռուսաստանի ծախքերը։ «Echo de Paris» լրագրի Պետերբուրգի թղթակիցը հաղորդում է. «Պատերազմի սկզբից մինչև նոյեմբերի 23 ը Ռուսաստանը ծախսել է 476 միլիոն բուբլի պատերազմի վրա։ Մինչև եկող տարվայ փետրվարի 14 ը ծախքերը ծածկելու համար յատկացված է 252 միլիոն, այնպէս որ պատերազմի առաջին տարին կը նստի 728 միլիոն։ Վերջին փոխառութիւնից և վերջին բիւջէտի խնայողութիւններից մնում է դեռ 298 միլիոն։ Ուրեմն առ 14 փետրվար 1905 թ. կը մնայ աւելորդ 46 միլիոն բուբլի, եթէ մինչև այդ ծախսվի նոյն իսկ յատկացրված ամբողջ 252 միլիոնը։ Պետերբուրգում ենթադրում են, որ պատերազմը կը տևէ դեռ էլի մի տարի և կը պահանջէ դեռ էլի 600 միլիոն բուբլի։ Գանձարանի ոսկէ կանխիկ դրամը դեռ անշօշափելի է մնում, և յոյս ունեն, որ նրան ձեռք

տալու կարիք չի լինի։ Նա բաւական է վճարելու պետական պարտքերի տոկոսները առաջիկայ երեք տարվայ համար։ (Б. Вѣд.)

Կապիտան Կլադօի մերկացումները։ Ցայտնի են կապիտան Կլադօի մերկացումները, ռուսական նաւատորմի մասին, որոնց պատճառով նա ենթարկվեց նոյն իսկ կարգապահական պատասխանատուութեան։ Այդ մերկացումները տպվեցին «Нов. Время» թերթում։ Ռուսաց ծովապետներից մինը Բիրիլով մի մեծ յօդուած տպեց նոյն լրագրում, որով սաստիկ պախարակում էր կապիտան Կլադօի վարմունքը, ասելով որ «ոյժը ոյժի մէջ չէ, այլ վճռականութեան մէջ, առ հայրենիքը ունեցած սիրոյ մէջ», որ Կլադօն հակահայրենասիրական գործ է կատարում, որովհետև նրա մերկացումները կարող են վնասութիւն առաջ բերել։ Պատասխանելով այդ մեղադրանքներին նոյն «Нов. Время» լրագրի մէջ, Կլադօն գրում է. «Թողով ուզում էր գրէր, բայց ոչ ծովապետ Բիրիլովը, ոչ նա—որքան մեծ մեղք է նրա կողմից։ Նա իր ահագին հեղինակութիւնը դրեց այն մարդկանց կողմը, որոնք ասում էին. «մի կարծէք, որ եապօնացիները այնքան զօրեղ են, դա ինքնախաբէութիւն է, տկար հոգիների հիպնոզ է...։ Եապօնական նաւատորմը ջնջվել է և սաստիկ ջնջվել։ Մեր երկրորդ էսկադրան—ոյժ է, հաւասար եապօնացիների ոյժերին և ամեն տեսակ շանսեր ունի լիակատար աջողութիւն գտնելու բաց կռուի մէջ...» Եւ ծովապետը վճռել է այդ անել, հասկանալով, ի հարկէ, ուրիշներից ոչ պակաս, որ հէնց այդպիսի հաւաստիացումները թէ մեր բոլոր արածը լաւ է, թէ մեր թշնամին թուլացած է և այլն, հէնց այդ տեսակ հաւաստիացումները և այն մտքերը թէ «ոյժը ոյժի մէջ չէ, այլ վճռականութեան և առ հայրենիքը ունեցած սիրոյ մէջ» եղել են գլխաւոր պատճառ մեր դառն հիասթափումների և ծանր անաջողութիւնների, որոնց ենթարկվեց Ռուսաստանը։ Եւ ծովապետը վճռում է մտածել, թէ ռուս հասարակութիւնը դեռ այնքան երիտասարդ է և անգիտակից, որ նրան պէտք է մխիթարել նկարել նրան վարդագոյն պատկերներ, որ կարելի է վերաբերվել նրան ոչ լրջօրէն, այլ իբրև երեխայի...։ (Н. В.)

Գեներալ Կուրոպատկինի խօսքերը։ «Կեօնիգսբերգիան» լրագրի խօսքերով, գեներալ Կուրոպատկինը, երբ զօրահանդէս էր անում Լուբենսկի գնդին, արտասանեց մի ճառ, որի մէջ ասաց, որ այսուհետև ոչ մի նահանջում, նոյն իսկ փոքրիկ զօրախմբերի, այլ ես չեն թոյլատրվի։ Եթէ որ և է զօրախումբ ընկնի դժուար կացութեան մէջ, հարեան զօրախմբերը նրան օգնութեան կը հասնեն։ Այս նպատակը պէտք է իրագործվի ինչ գնով և լինի։ (Нов.)

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

25 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Բութայլսի նահանգապետ Սմագինին Բարձրագոյն շնորհած է Վլադիմիրի III աստիճանի շքանշան։

ՄՈՒԿԴԷՆ, 25 դեկտեմբերի։ (Սեփ. թղթ.)։ Դիրքերում ամեն ինչ խաղաղ է։ Երէկ ցերեկով Պուտիլովեան բլուրի դիմացը, կենտրոնում՝ ուժեղ թնդանօթաձգութիւն կար։ Թընդանօթաձգութիւնը դադարեց։ Զօրքերի տրամադրութիւնը և առողջապահական վիճակը գերազանց են. ամեն կողմ տօնածառեր են։ Զօրքերը դիմաւորում են Ծննդի տօնը ժամերգութիւնով։

ԼՕՆԴՕՆ, 24 դեկտեմբերի։ (Բէյտէր)։ Եապոնիան մերժում է Պորտ-Արտուրում անգլիական օգնութիւնը։

ՊԱՐԻԶ։ (Հաւասի գ. ծակալութիւն)։ Դեկտեմբերի 24-ին ժամանեց փոխ-ծովապետ Դուբասով, որը Կազնակովի տեղ նշանակված է Ռուսաստանի ներկայացուցիչ հուլլեան դէպքի առիթով գումարվող կոնֆերէնցիայի։

ՊՕՐՏ-ԱՐԹՈՒՐ, 23 դեկտեմբերի։ (Բէյտէր)։ Ստեսէլ խնդրեց Նոգէին ընծայ ընդունել իրանց մի գեղեցկաքայլ նժոյգ, որի վրա Նոգին զմայլում էր, սակայն վերջինս հրաժարվեց ընդունելու այդ որպէս անձնական ընծայ բայց ընդունեց նրան եապօնական զօրքի կողմից ի յիշատակ Ստեսսէլի։

ՏՕԿԻՕ։ (Բէյտէր)։ Արժանահաւատ աղբիւրից հաղորդում են, որ Պորտ Արտուրը ս բազմաթիւ զոհեր են տանում տիֆը և այլ վարակիչ հիւանդութիւնները։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գեներալ լէյտենանտ Սախարովի հեռագիրը գլխաւոր շտաբին 1904 թւի դեկտեմբերի 24 ից. «Դեկտեմբերի 23-ին Խաուխէ գետի աջափի վրա Կուդեազի գիւղի մօտ Սէֆենտայ գիւղից դէպի հիւսիս բռնվեց եապոնական խուզարկու խումբը, որ բաղկացած էր մէկ օֆիցէրից և 5 զինուորներից։ Օֆիցէրը և զինուորը ընդհարման ժամանակ սպանվեցին։ Եապոնական 4 դրագունները 6 ձիերով գերի առնվեցին։ Նոյն թւին վերադարձաւ կօրնէտ Մասսի խուզարկու խումբը, որը դեկտեմբերի 19-ին պօրուչիկ Լէվշանսկու և խօրունժի Գրունիչէվի խուզարկու խմբերի ձեռքով երկաթուղիական գիծը փչացնելուց յետոյ Խայչէնի մօտ, դիմից դէպի Նիւ Զժուան, որի շրջականերում փչացրեց եապոնական դաշտային հեռագրաթելը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺԻՇԿ Ս. Զ. ՄԻՐԶՈՅԵԱՆ

ԱԶՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդունելութիւն ամեն օր, ժ. 2—3 և 5—7 երեկոյեան, իսկ տօն օրերին առաւօտեան ժամը 10—11. Սօլօլակի փող. № 6.

(ա. օ.) 26—50

Թիֆլիսի հակա-ալկօհոլական ընկերութեան Հալաբարի բաժին. Ն. Մուրաչկոյի թատրոնում, երկուշաբթի, դեկտեմբերի 27-ին, հայ թատերասէրների նոր խումբը

Բարեհաճ մասնակցութեամբ պ. Սողոմոնեանի

կը ներկայացնէ

I

Ա Ր Շ Ա Կ Բ.

Պատմ. դրամա 5 գոյծ։ հեղ. Պէշիկթաշլեանի։

II

ՊԱՌԱԻՆԵՐՈՒՆ ԽՐԱՏ

Ֆարս վոդվիլ 1 գործ. Տէր-Գ իգորեանի։

Սկիզբն է ճիշդ 8½ ժամին երեկոյեան։

Տեղերի գները 10 կ. մինչև 60 կոպէկ։

Խաղամիջոցներին կը նուագէ երաժ. խումբը։

Տօմսակները վաճառվում են թատրօնի կասայում ներկայացման գիշերը։

1—1 Կարգադրիչ Գ. Բուդաղեան

Լոյս տեսաւ

Ա. Ա. ՀԱՐՈՆԵԱՆԻ

«ՊԱՏԿԵՐՆԵՐ»

«ՄԱՅՐԵՐԻ»

հետ մի գրքում։

Գինն է մի բուբլի։

Դիմել Թիֆլիսի գրավաճառներին և հեղինակին Тифлисъ редакція «Мурчъ».

1—10

Տնային Բժշկարան

Կազմեց ակադեմիկ Ի. Ր. Թարխանով, հայերէն թարգ. բժ. Գ. Ս. Բաբեանի խմբագրութեամբ և յաւելուածներով, ժ. ա. Բնախօսութիւն և անդամակազմութիւն 104 պատ. գինը 1 ր., մ. ր. Վարակիչ հիւանդութիւններ, ներքին, կաշու և վեներային, գեղարան և բառարան 1903 թ. գ. 1 ր. 60 կ.։ Դիմաբով գնող ներին և հաստատութիւններին զիջումն կը լինի։ Դիմել Въ Тифлисъ, Центральной книжной торговлѣ. (կ.) 13—25

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի պ. Նահանգապետը ներկայ դեկտեմբերի 30-ին առաւօտեան 8 ժամին նշանակեց

ԹԻՖԼԻՍԻ ՄԷՆՇԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԼԻԱԶՕՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

թով հարիւր մարդ, որոնք, ապա, 1905 թւի յունվարի 7-ին պէտք է ընտրեն 1) մէշչանների աւագին, 2) դրամական տուրքեր հաւաքող աւագին և 3) այս վերջինի տասը օգնականներին, նոյնպէս և այդ պաշտօնական անձանց իրաքանչիւրի կանդիդատին։ Ցայտնելով այդ մասին, Թիֆլիսի ոստիկանապետը, պ. Նահանգապետի հրամանով, խնդրում է Թիֆլիսի ձայնի իրաւունք ունեցող մէշչաններին, գալ դեկտեմբերի 30-ին ոչ ուշ առաւօտեան 7 և կէս ժամից ընտրական այն մասերը, որոնց շրջաններում բնակվում, ուր դիմաժամանակ—առաւօտեան ճիշդ 8 ժամին կը սկսվեն, պրիստաւների հսկողութեամբ, լիազօրների ընտրութիւնները։ Իսկ Մէշչանների Վարչութեան պաշտօնատար անձանց ընտրութիւնները կը կատարվեն 1905 թւի յունվարի 7-ին, առաւօտեան 10 ժամին Քաղաքային Վարչութեան դահլիճում, ուր այդ ժամանակ պարտաւոր են գալ այն լիազօրները, որոնց կընտրեն դեկտեմբերի 30 ի ժողովի համար։

Ն. Ի. ԲՈԶԱՐՋԵԱՆՑ

ԵՒ ՈՐԴԻՔ

Առևտրական տուն

ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ

(Թիֆլիսում)

որ գոյութիւն ունի 1858 թուականից և իր ընտիր կերպով պատրաստված ծխախոտերի համար արժանացել է Բարձրագոյն պարգևներ և մեդալներ, իր մշտական էլիէնտներին

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

այսու յայտարարում է, որ զանազան գործարաններ, որոնց թւում և «ՄԻՐ» ակցիոներական ընկերութեան, և Մ. Ս. Սաֆարեանի ժառանգների ծխախոտի գործարանները բաց են թողել այնպիսի պապիրոսներ, որոնք իրանց դարսվածքովը, գրերի և էտիքէտների վրա եղած սակագրութիւնների միանմանութեամբը, նոյնպէս և կապոցների և արկղիկների ձևերովը, եաուլիկների և փութերների համար գործածած նոյն տեսակ թղթի գոյնովը—բոլորովին չեն տարբերվում մեր պատրաստածներից. մինչդեռ դրանք վաղուց ի վեր ծառայում են որպէս արտաքին տարբերութեան յատկանշան՝ մեր գործարանի արդիւնաբերած և ահագին քանակութեամբ տարածված հետևեալ պապիրոսների.

№ 8 10 հատը 5 կոպ.	№ 15 Սիմպատիա 10 հ. 5 կ.
№ 7 10 հատը 3 կ.	№ 16 10 հատը 3 կ.

ուստի, մեր գործարանի պապիրոսները պահանջելիս՝ աչքս մեծ է առանձին ուշադրութիւն դարձնել կառավարութիւնից հաստատված էտիքետի, ԳՈՐԾԱՐԱՆԻ ՆՇԱՆԻ

և Н. И. БОЗАРДЖІАНЦЪ съ С-ми

մակագրութեան վրա

Մեր գնողներին մոլորեցնելու համար «Միր» ընկ. գործարանը իր պատրաստած մի և նոյն նօմէրները կրող պապիրոսների եաուլիկների վրա, ինչպէս և մերը, դեռևս դել է մի այնպիսի դրոշմանշան (կլէյմօ), որ իսկապէս դժուար է զանազանել մեր Առևտրական տան դրոշմանշանից։

Կեղծողներին ենթարկելու ենք օրինական պատժի։

(կ. չ. ու.) 1—10

ԹԻՖԼԻՍԻ ԱՐԲՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՕՆ

Ձեռնարկութիւն կայսերական թատրոնների արտիստ Լ. Դ. Դօնսկոյի

ՏՕՆԱԿԱՆ ՐԷՊԷՐՏՈՒԱՐ

Դեկտեմբերի 26 ից մինչև յունվարի 1-ը 1905 թ.

Կիրակի, դեկտեմբերի 26 ին 2 ներկայացում։ Ցերեկվայ, հանրամատչելի գներով

Կը ներկայացվի

Ֆ Ա Ո Ի Ս Տ

օպերա 5 գործ. երաժ. Գունօի։

Գիշերվայ մասնակցութեամբ Լ. Դ. Դօնսկոյի կը ներկայացվի «ՊԻԿՕՎԱՅԱ ԴԱՄԱ» օպ. 3 գործ. և 7 պատկ. երաժ. Չայկովսկու։

Երկուշաբթի, դեկտեմբերի 27 ին 2 ներկայացում։ Ցերեկվայ. հանրամատչելի գներով կը ներկայացվի «ԵՎԳԵՆԻՅ ՕՆԷԳԻՆ» օպերա 3 գործ. 7 պատկ. երաժ. Չայկովսկու։ Գիշերվայ ներկայացում. կը ներկայացվի «ՍՆԵԳՈՒՐՕՉԿԱ» օպերա 4 գործ. Նախաբանով երաժ. Ռիմսկի-Կարսակովի։

Երեքշաբթի, դեկտ. 28 ին գիշերվայ ներկայացում մասնակցութեամբ Լ. Դ. Դօնսկոյի կը ներկայացվի «ՆԵՐՕՆ» օպ. 4 գործ. երաժ. Ռուբինշտէյնի։

Չորեքշաբթի, դեկտեմբերի 29 ին վրաց դրամատիկական ընկ. ներկայացում։

Հինգշաբթի, դեկտ. 30 ին գիշերվայ ներկայացում, մասնակցութեամբ Լ. Դ. Դօնսկոյի. կը ներկայացվի ՄԱՆՕՆ, օպեր. 5 գործ. երաժ. Մասսէնէի։

Ուրբաթ, դեկտ. 31-ին կը ներկայացվի 1) ՍԵՎԻԼՍԿԻ ՑԻՐՈՒԼՆԻ, օպեր. 3 գործ. երաժ. Ռոսսինի. 2) ՆՈՐ ՏԱՐՎԱՑ ԴԻՄԱՒՈՐՈՒՄԸ և ԴԻՄԱԿԱՀԱՆԴԷՍ։ Լօժաներում, պարտէրում, ամֆիտէատրում և 2-դ ու 3-դ եարուսների բալկօնում տոմսակ վերցնողները իրաւունք ունեն մեկ դիմակահանդէսում։

Շաբաթ, յունվարի 1-ին 1905 թւի. կը ներկայացվի «ԲՕԿԱՋԻՕ», կօմիքական օպէրա, 3 գործ. երաժ. Զուպպէի։

Առաւօտեան ներկայացումների սկիզբն է ցերեկվայ 12½ ժամին, իսկ երեկոյեանները երեկոյեան 8 ժամին։

Տօմսակները ծախվում են։

(հ. 2. 2) 3 - 3

Կիրակի, դեկտեմբերի 26 ին, ժողովրդական ընթերցանութեան դահլիճում (Աւճալեան փողոց) կը տրվի

ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

I

ԲԱՂԴԱՍԱՐ ԱՂԲԱՐ

Կօմ. 3 գործ. հեղ. Պարոնեանի, փոխ. Վրոյրի և Սարդարեանի։

II

Վ Ա Յ Ր Ե Ն Ի

Վոդվիլ 1 գործ. հեղ. Է. Տէր-Գրիգորեանի։

Սկիզբն է 11 ժամին առաւօտեան։

Մուտքը 10 և 5 կ.։ Տօմսակները վաճառվում են թատրօնի կասսայում ներկայացման օրը։

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Ս. Ա. Ստեփանեան

Ընդունում է առաւօտեան 9—2 և 5—7, Վելամինսկայա փ. № 8.

ա. օ.



Պրոֆիզոր Ա. ՍԱՐՈՒԽԱՆԵԱՆՑԻ

ԲՕՐՕ-ՆԱՖԹԱԼԱՆ

Նորնիւթը

Կատարելապէս ոչնչացնում է գլխի թեփը, ամրացնում է մազերը և օգնում մազերի բսնելուն. տալիս է մազերին իրանց բնական ու հաստատ տեսքը։ Թոյլատրված է բժշկական վարչութիւնից, իբրև ոչ մի վնասակար նիւթ չը պարունակող։

Պահեստարան Кавказское Товар. торговл. аптек. товарами Въ Тифлисѣ, Баку, Батумѣ, վաճառվում է և Ռուսաստանի գեղատներում և գեղավաճառատներում։

Արժէքն է 1 բուբլի 25 կոպէկ։

(շ. 1 ան.) 27—50

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

յայտնում է ի գիտութիւն հայ գրականագէտների, որ պ. ԱՂԱՍԻ ԱՌԱՔԵԼԵԱՆ ՄԷԼԻՔ ԱՅՎԱԶԵՆԸ նուիրել է ընկերութեան 100 բուբլի, իբրև իր անուան առաջին մրցանակ ժամանակակից հայկական ժողովրդական կեանքից վերցրած լաւագոյն ինքնուրոյն հայերէն պիէսի համար։

Պ. Աղասի Մէլիք-Այվազեանի անուան մրցանակը ստանալ ցանկացող թատերագիրները պէտք է ուղարկեն իրանց պիէսները Հայոց Դրամատիկական ընկերութեան վարչութեան նախագահի հասցէով (Тифлисъ, Барятинская, № 8. Кн. М. М. Тумановой)։ Գրուածքը պէտք է ուղարկել մինչև առաջիկայ 1905 թ. մարտ ամսի 1-ը։

Գրուածքը կրելու է իր վրա հեղինակի որոշած կեղծ անունը կամ մի բնաբան (էպիգրաֆ) և հետն ունենալու է նոյն կեղծ անունը կամ բնաբանը կրող մի երկրորդ փակ ծրարի մէջ պէտք է լինի հեղինակի իսկական անունը և հասցէն։ Երբ գրուածքը դատվի մրցանակի արժանի, այն ժամանակ կը բացվի երկրորդ ծրարը և կիմացվի հեղինակի իսկական անունը և հասցէն։

Մրցանակի արժանի չը դատված երկերի անունները յանձնաժողովը՝ առանց 2-դ ծրարը բանալու և հեղինակի իսկական անունը իմանալու կը յայտարարէ, որ տէրերը բարեհաճեն որ և է ձևով յետ ստանալ։ Մրցանակաբաշխութեան համար ընտրվելու է առանձին յանձնաժողով։

Ֆինանսների նախարարության իրաւասության տակ գտնվող

ՀԱԼՈՒՍՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշուապահութեան ձեռնարկի», որ Ֆինանսների նախարարութեան ուսումնական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում

ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ

Երկու տեսի անձանց՝ գործնական ձևով հաշուապահութիւն 4½ ամսում։

Պարապմունքի առարկաներն են.

1) Իտալական կրկնակի հաշուապահութիւն արդիւնագործութեան բոլոր ճիւղերի վերաբերեալ, վաճառականական, բանկային, յանձնարարական։ գործարանական, նաև նաւթարդիւնաբերական և նաւթագործական հաշուապահութիւն։ 2) Առևտրական թուաբանութիւն։ 3) Առևտրական թղթակցութիւն։ 4) Մուրհակային և առևտրական օրէնքներ։ 5) Վայելչագրութիւն և ուղղագրութիւն։ 6) Թուաբանութիւն համբիչի վրա։ 7) Գրելու վարժութիւն «Ռէմինկտոնի» գրելու մեքենայի վրա (կամաւոր)։

Կուրսերի համար դասատուներ են հրաւիրված համալսարանական կրթութիւնով և իրանց գործիչ մասնագէտ մարդիկ, որոնք հաստատվել են իրանց պաշտօնում Ֆինանսների նախարարութեան ուսումնական բաժնի կողմից. գեղագրութեան համար ևս հրաւիրված է մի գեղագիր նկարիչ։

Ընդունելութիւն ամեն օր ժամը 5-ից մինչև 7-ը երեկոյեան։ Պարապմունքները սկսվում են 1905 թիւ յունվարի 15-ից պարբերաբար ամեն 4½ ամիս, ամենայն օր ճաշից յետոյ 60 ռուբլի վճարով ամբողջ դասընթացքի համար։

Դասընթացքը աւարտողներին տրվում են, Ֆինանսների նախարարութեան թոյլատրված ծրագրի համաձայն, ատեստատներ։

Դրանից անկախ, բացված է քիչ պատրաստութիւն ունեցող անձերի համար առանձին լրացուցիչ և կրկնողութեան կուրսեր ռուսաց լեզուի և թուաբանութեան համար։

Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին՝ Թիֆլիսում, Н. В. Абрамяну, Николаевская ул. № 46, *ամենայն օր։ Ծրագիրն ուղարկվում է ձրի։*

Վերևում յիշած ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պոստի ծախս վճարելու։ ԳԻՆՆ է 3 ր. 50 կոպէկ։ (հ. կ. ե.) 8—20

ԲԱՑՎԱԾ Է **ՄՈՒՐՃ** ԱՄՍԱԳՐԻ

1905 թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԹԻՖԼԻՍՈՒՄ կարելի է գրվել։

1) խմբագրատանը *(Ճավճավաձեան փողոց, տ. № 16), 2)* «Դուստենբերգ» *և* «Կենտրոնական» *գրախանութներում, 3)* «Прогрессъ» *ծխ. խանութում (Գոլովինսկիյ պր., «Ժողովարանի» տակ), 4) Հերմես տպարանի գրասենեակում (Մադաթեան փողոց, № 15)։*

Կայսրութեան այլ տեղերից պէտք է դիմել. Тифлисъ, въ редакцію журнала «Мурчъ». *Արտասահմանից՝* Tiflis, Rédaction de la revue «Moursch».

Բաժանորդագինը՝ տարեկան—10 ռուբլի Ռուսաստանում, 12 ռուբլի Արտասահման։

2—5

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ

Երեքշաբթի, դեկտեմբերի 28-ին

յօգուտ Թիֆլիսի Հայոց Բարեգործական ընկերութեան

«ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶՐԻ և ԷԺԱՆԱԳԻՆ ՃԱՇԱՐԱՆԻ»

կը տրվի

ՄԱՆԿԱԿԱՆ ՄԵԾ ՀԱՆԴԷՍ

Էլէկտրական տօնածառով։

«ԾՆՆԴԵԱՆ ԳԻՇԵՐԸ ԱՌԱՋՆԱՊԱՀԱԿՈՒՄ»

Մեծ դիօրամա

Նկարիչ դեկօրատօր Ա. Օ. Նօվակի աշխատ.

Էլէկտրական զանազանագոյն վրան ամբողջ դահլիճում, դահլիճը հրավառվելու է զանազան գոյներով, Սերպանտինների կռիւ, ֆանտաստիկական քիօսկներ, հանդիսաւոր գնացք դրօշակներով։ Կոնտրմարկները քիօսկներում ներկայացնելիս, ամեն մի երեխայի տրվում է մի դրօշակ գնացքին մասնակցելու համար։

Մրցանակաւոր հսկայ—բերուս։ Բերուսը դրվելու է բոլորին տեսանելի տեղում։ Բերուսը առաջին լուծողը եթէ գրաւոր ներկայացնէ իր անսխալ լուծումը, կը ստանայ ոսկէ ժէտօն Հայոց Բարեգործական ընկերութեան մակագրութիւնով, իսկ հետևեալ երկուսը կը ստանան արծաթէ ժէտօններ։

«ԲԱՂԴԻ ՇԻՇ»

Մանկական խաղեր և զուարճութիւններ։

Երկու նուագախումբ. լուսեղէն էֆֆէկտներ, ղեկավար պ. Կ. Ռօ-ի։

Տոմսակների թիւը սահմանափակ է։

Սկիզբն է ցերեկվայ ժամը 1-ին, վերջանալու է երեկոյեան 9 ժամին։

Տոմսակները ծախվում են թատրոնի կասայում։ Գներն են. երեխաները և աշակերտները վճարելու են 50 կ., մեծերը 75 կ։

21, 26, 28. 2—3

Մելիք-Բախտամեան եւ ընկ.

Պուշկինեան փողոց

առաջիկայ տօների առիթով առաջարկում է

ԼՕՌՈՒ ՄԵՂՐ

30 կ. ֆունտը, 11 ռուբլի պուդը կարագ I տեսակի 60 կ. ֆունտը։ Զանազան տեսակ պանիրներ։ 6—10

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

ՀԻԿՕՂԱՆԻ—9—10 ժ. աչքի. ներքին և նեարդային

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ—10—11 ժ. մորթու, վեներակ և վիրաբուժութիւն։

Զ. Ի. ԲՈԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.

Գ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի

Դ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏՅԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

Ա. Գ. ՍԱԼՕԼՕՎ ատամնաբույժ. 9—11 ժ.

ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՀԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Գ. Ռ. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—7½—8 ժ.

Գ. Ա. ԱՐԳԱՋԻԱՆԻ. Կատարում է միկրո-քիմիական և բակտերիոգիական հետազօտութիւններ։

Օ. Ա. ԱՌՎԱՆԻՏԱԿԻ—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցում ընդունվում են և գիշերօթիկ հիւանդներ։

Հիւանդանոցի կառավարիչ՝ Բժ. Կ. Ի.

Երդուեալ հաւատարմատար

Ս. Ս. ՄԷԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆՑԻ

„Практическое Руководство“

для составленія бумагъ по дѣламъ Гражданскаго Судопроизводства въ ЗАКАВКАЗСКОМЪ КРАѢ, изд. 1904 года“.

ԳԻՆՆ է 1 ռուբլի։

Վաճառվում է Թիֆլիսում. Կենտրոնական, Խիդդէկելի և Գուտտէնբէրգ գրավաճառանոցներում։ Հեղինակին դիմողներ՝ (Прис. повѣр. С. С. Меликъ-Адамову, Тифлисъ. Межевая ул., д. № 40) *10 օրինակից աւելի պահանջողները՝ ստանում են 20% զեղչ և ճանապարհածախս չեն վճարում։* ե. շ. 16—30

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ

Կիրակի, դեկտեմբերի 26-ին

Տեղի կունենայ

Պող. Կարա-Մուրզայի ՀԱՄԵՐԳԸ

Սկիզբն է 8 ժամին երեկոյեան։

Տոմսակները 3 ր. 60 կոպէկից մինչև 50 կոպ.։ Վաճառվում են Ա. Ն. Լիսինովի և Ի. Վ. Արովանցի խանութներում, Երևանեան հրապարակի վրա և ժողովարանի շվեյցարի մօտ։

(կ. ու. կ.) 3—3

ՎԱՐԴԱԳՈՅՆ

Բիւրեղային Սապոն

№ 4711

Գլուցերինի ԲԱՐՁՐ չափ։

Տնտեսութիւն—փրփուրի առատութեան պատճառով։

ՎԱՐԴԻ ՓՆՓՈՅՇ ՀՈՏ,—

ահա այդ սապոնի բնորոշ բարձր յատկութիւնները։

ՖԵՐԴ. ՄԻԻԼԳԻՆՍ

Կօլոկօլնաեա փող., № 4711

Կեօլնում և Բրիգայում։

№ 153767/72 3—6

հ. 27, նս. 24, դ. 18, յ. 26, մ. 9, յն. 6

ՉՔԵՂ

Լոյս տեսաւ «ՇՔԵՂ»-ի Ե. պրակը, տասը գեղարուեստական նկարներով, արժէ 1 ր. 20 կ. տասնեակով գնողին հատը 1 ռուբլի։

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

մի այլ գեղարուեստական ընտիր հրատարակութիւն տպագրված խաւաքարտի վրա (բրիստոլ կարտոն)

ՏԱԽՏԱԿ ՕՐԱՑՈՅՑ 1905 թ.

Տ. Սիրանոյշի 30-ամեայ բեմական գործունէութեան յիշատակին, 30×40 սմ. մեծութեամբ, զանազան դերերի մէջ և քաղաքացիական տարազով։

Արժէ Թիֆլիսում . . . հատը 20 կ.

Իսկ գաւառների համար . . » 25 »

(Գաւառից 10-ից պակաս պատուէրները չեն կատարվում),

իսկ 10 ից աւելին կը հաշուի հատը . 20 կ.

Ալբոմ և Օրացոյց միասին գնողին՝ Օրացոյցը կարժենայ . . . 10 »

Նպատակայարմար տօնական ընծայ կարող են լինել մեր Ալբոմները, Հայ գործիչների բաց նամակները (130 տեսակ—100 ով՝ 2 ր. 50 կ։ իսկ 1000-ով՝ միայն 20 ր.), Օրացոյցը և այլ ընտիր գեղարուեստական հրատարակութիւնները։ Շտապեցէք դիմել մեզ հետևեալ հասցէով. Тифлисъ, фототипія Гнуни—Маримъ. 7—15

Дозволено цензурою. Тифлисъ. 25 го декабря 1904 г. Ծպարաց «ՀԵՐՄԷՍ» ԸՆԿ. Типогр. Т—ва С. Назарянца и К. п. ф. «ГЕРМЕСЪ». Мад. ул. № 15.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1905 Թ.
Պարիզում հրատարակվող

„ԱՆԱՀԻՏ“

Ազգային, քաղաքական, գրական եւ գեղարուեստական հանդես ամսեայի 7-րդ տարեշրջան

«Անահիտ» նպատակն է նպաստել հայ ժողովրդին մտաւորական և բարոյական զարգացման. կը հրատարակէ ուսումնասիրութիւններ եւրոպական գրականութեանց գեղարուեստական, գրական, իմաստասիրական, ընկերական, պատմական և այլ հարցերի մասին յօդուածներ, բանաստեղծութիւններ, քննադատութիւններ, թարգմանութիւններ արևմտեան և արևելեան գրական հատընտիր էջերի և այլն.

Բաժանորդագինը—ինչպէս Կովկասի, նոյնպէս և Ռուսաստանի բոլոր քաղաքների համար բոլոր ծախքերով հետևեալն է—12 ամսվայ համար 5 բուբլի, 6 ամսվայ համար 3 բուբլի

Այն բաժանորդներին, որոնք դժուարանում են միանուագ հինգ բուբլի վճարելը, թոյլատրվում է մաս մաս վճարել։ Մաս մաս վճարել ցանկացողները, պէտք է յայտնեն նամակով առաջին մասը վճարելու ժամանակ։ Գրվելու ըստ էին վճարվում է 2 բուբլի մայիսի 1-ին 1 բուբլի, օգոստոսի 1-ին 1 բուբլի, և նոյեմբերի 1-ին 1 բուբլի։

Թիֆլիսում «Անահիտ» ստանալ ցանկացողները կարող են դիմել ամեն օր երեկոյեան ժամը 4 ից մինչև 6 ը նրա գործակալ Սեդրակ ԿիրակոսեանինВанкскій пер. д. Акопджанова № 23. Ossr քաղաքներից կարող են դիմել նամակով վերոյիշեալ հասցէով։ Բացում ստանալ ցանկացողները կարող են դիմել արկին Մալի Սուլդուշեանցի գրավաճառանոցը, въ Баку, Николаевская ул, № 1։

«Անահիտ» անցեալ տարիների բաժնեգները տակաւին չը վճարող Թիֆլիսի բաժանորդներին խնդրում են փութան վճարելու վերոյիշեալ ժամերին վերոյիշեալ հասցէով։

(Կ. ո. կ.) 1—3

դարձրէք գործարանի մարկայի վրա «ԳԻՐՈՂ ԱՄՈՒՐ»

ԾՆՆԴԵԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԿԱՐ ՆՈՒԷՐ



Ստացվել են ահագին քանակութեամբ պըլաստինկաներ, ամենանոր ժամանակներում գրված, ամեն տեսակ երգեր և զանազան լեզուներով։

Գներն ԷԺԱՆ են

Կօնցէրտային ժամերանները 3 բուբլուց սկսած աւելի թանգ գնով։

ՏՕՆԱՐՄ—ՀԱԿԱՅ
ԱԿՑԻՕՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
„ԳՐԱՄՊՈՖՕՆ“

ԳՈՐԾԱՐԱՆԻ ՄԱՐԿԱՆ

Թիֆլիս, Գոլովինսկէ պրոսպէկտ 2—10 Հեռախօս № 69.

Ապարատներ և պլաստինկաներ գնելու ժամանակ դարձրէք գործարանի մարկայի վրա «ԳԻՐՈՂ ԱՄՈՒՐ»

ԱՊԻՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ „ՍՏՈՒԿԵՆ ԵՒ ԸՆԿ.“
ԲԱԳՈՒ

Իր սեփական պահեստներում մշտապէս ունի

Երկաթ ամեն տեսակի և ձևի (Листовое, резервуарное, сортовое, фасонное, кровельное и оцинкованное) երկաղանի երկաթէ զարդաններ, ջրհան մեքենաներ «Գամերոն» և «Դուպլէքս», ռուսական գազային խողովակներ և դրանց զգաւորող մասեր, ֆիտինգներ և այլն: Դուրգեր զանազան տեսակի (станки токарные, сверлильные, строгальные и др.): Մամուլներ ձակող և ուրիշ տեսակներ: Գազպատ՝ գուրեր, կարոցներ և գործիքներ շինելու համար: Մետաղեայ փոփեր, աղիւս անհալ (согнеупорный), «Գլէնրոյդ» և կաւ, բլեհներ (заклепки котельныя, пистонныя): Գամեր զանազան տեսակի, պտուտակներ (болты) և գայկաններ, պլինձ թերթաւոր և կտորներով, պլինձէ խողովակներ, թուջէ ասֆալտած (асфалтированныя) խողովակներ ջուղինների համար և դրանց զգաւորող մասեր. Անագ ձողաւոր, արճիճ թերթաւոր և կտորներով, ցինկ թերթաւոր և այլն: Պատգամներ (арматура) ալմանեայ, բրօնզեայ և ձուլածոյ: Գործիքներ զանազան տեսակի, բեռինէ աստրկաններ, ցեմենտ. նմանապէս տեխնիքական ամեն տեսակի մետաղներ և իրեր:

Ներ՝ այացուցիչ է
ՐՈՒՍՏՈՆ ԳՐՈՍՏՈՐ և ԸՆԿ.

Շոգեմեքենաներ
Կերօսինեայ } շարժիչ մեքենաներ
Նաւթեայ }
Շոգեատրներ (локомобилы)
Արդուկներ (катки для шоссе)

ՐԻՔԱՐԴ ՄԱՅԵՐ

Ներկեր զանազան տեսակի
Արճիճեայ ճերմկուց (бѣлила)
Արճիճեայ սուրբ (сурикъ)

ԳԵՐՄԱՆ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՆՆԵՍՄԱՆԵԱՆ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻ
Միակ ներկայացուցիչը

Խողովակներ առանց կարի, գազեայ, նաւթահորերի, ծխնելուղի և ջրաշխատան: Նմանապէս և ամրակուռ խողովակներ խտացուցիչների համար (компрессоръ):

Կայմեր (мачты) անկար խողովակներից, եղեգրական ուղիների լուսաւորութեան և այլ շինուածքների համար սիներ հեռախօսական, հեռագրական լարերի և շանթարգելների համար:

Ներկայացուցիչ է նմանապէս «Գանտէյ» «Էմիլ Լիպգարտ և ընկ.» և ուրիշ ընկերութիւնների ու հատատարութիւնների:

Ընդունում է լիովին կառուցումն տախտակի, բուրդ լուանող և ուրիշ գործարանների. նմանապէս ընդունում է պատուէրներ այլ և այլ տեսակ տեխնիքական պիտոյքների վերաբերեալ:
Իւրաքանչիւր հարցերին պատասխանում է անմիջապէս:
Արժէքների ցուցակները ուղարկվում են ձրիաբար:

Լոյս տեսաւ Ե. Թոփչեանի խմբագրած պատկերազարդ

„ԼՈՅՍ“

1905 Թ. ՍԵՂԱՆԻ օրացոյց-հանդէսը հետեւեալ բովանդակութեամբ.



Առաջաբան, Տախտակ օրացոյց, Օրացոյց, Մշտական օրացոյց, 2 ամսաթուերի տարբերութիւն, Ռուսաց կայսերական տունը, Հայկական եկեղեցու վարչակ. կազմակերպութիւնը—Ց.եպ. Տէր Մովս., Հայրապետութիւն ամենայն Հայոց։ **Տեղեկատու**. Իրաւաբանական տեղեկութիւններ, Մուրհակ, Տօկոսների հաշուեցոյց, Խնայողական գանձարան և մարկներ, Բնակարանների հարկ, Պօստ, Հեռագիր, Անցագիր, Երկաթուղի, Սմենակարճ ճանապարհ դէպի Ռուս. գլխ. քաղաքները, Կովկասի քաղաքների հեռաւորութ., Նաւաղնացութիւն, Պօստային ճանապարհներ, Ռուսական չափերի համեմատութիւն, Եպօնական չափեր, Եւրոպ. և ռուս. ծանրութ. չափերի համեմատութիւն։ **Վիճակագրութիւն**. Աշխարհի 5 մասերը, Եւրոպական պետութիւնները, Ասիայի գլխաւոր պետութիւնները, Կովկասի գլխաւոր քաղաքների բարձրութիւնը, օդի բարեխառնութիւնը և այլն, Պետական պարտք, Կովկասի ազգաբնակութիւնը, Մարդիկ ինչ լեզուով են խօսում, Խաղաղութեան արժէքը, Գրագիտութիւնը զան. երկրներում։ **Հայերը**. Սամսատի Հայերը—Ե. Ֆրանգեանի, Զրիմի հայերը—Սուրխաթեանի, Հայերը Ռումինիայում, Բուլգարիայում և Սերբիայում. Ս. Պատկանեանի, Հայերը Տրանսսալտում—Յ. Ագնաուրեան, Լեհաստանի հայերը, պրոֆ. Անտոնովիչի, Հայերը Ջաւա կղզու վրա, Նուիրեալ գաւառի մահմեդական հայերը. Ղ. ք. Յովսէփեան, Հայերի թիւը Թիւրքիայում—Ե. Թ., Լուսաւորչական հայերի թիւը Կովկասում, Հայերը Վոլգայի ափերին. Ե. ք. Ստեփանեան, Թուրքեստանի հայերը, Ուտիացի հայեր, Հայ կաթոլիկների թիւը Ռուսաստանում։ **Ժողովրդեան և Առողջապահութիւն**. Ի՞նչ է հիւանդութիւնը. բժ. Լ. Քալանթարեան. Թոքախտը Կովկասում. բժ. Ա. Խատիսեան Առողջապահական խրատներ. բժշկ. Բ. Նաւասարդեան, Սիֆիլիսը իբրև ժառանգ. չարիք գոկտ. Կ. Փաշայեան, Գիւղակ բնակարան. առողջապ. մասին—բժ. Բ. Ագասարեան, Կանոններ ատամները խնամելու մասին, պրոֆ. Լեմբերգի։ **Պատմագրութիւն**։ Նշանաւոր դէպքեր ընդհանուր պատմութիւնից, Նշանաւոր դէպքեր հայկական անցեալից, Հայոց կաթողիկոսները, Ժամանակագրութիւն կանանց հարցի անցեալից, Ամենանշանաւոր գիւտեր, Եպօնիայի անցեալից։ **Կանանց հարցի շուրջը**. Կնոջ ձայնն ու իրաւունքը—բժ. Ա. Բուդուրեան, Կանանց շարժումը զան երկրներում—Տիկ. Հրանոյշ, Աստղագէտ կանայք—Հ., Պրոֆեսորների կարծիքը ուսանողուհիների մասին.—Հ., Մրցանակի արժանացած կանայք, Մահմեդական կանանց շարժումը—Լ. Բաբայեան, Կանանց միջազգային համագումարը Բերլինում.—Ե, Կանանց շարժումը Եպօնիայում. Ե. Թ։ **Տիտուրեան աշխարհից**. Ռէնտգէնեան ճառագայթները և բաղիումը իբրև բժշկական միջոց. թարգմ. Զ., Ինչ է ծերութիւնը. պրոֆ. Մեչնիկովի Զ. Զ., Բաղիումը։ յօդ. Կ. Աբովեանի։ **Հասարակական հարցեր**. Մարդկային ընկերութեան բարեկամներն ու բարերարները Մատթ. արք. Իզմիրլեան, Բարոյագիտական հարցեր.—Տ. Ռաշմաճեան, Մարդկային ընտանիքը. Խաժակ։ **Գիտակներ անցեալից**. Պատկանեանների, Ալամպարեանի և Մսեր Մսերեանի նամակները Խ. Աբովեանին։ **Հանրագիտարան**. Հոգեբանութիւն. Յ. Տէր-Միրաքեան, Բնութիւն և Նկարչութիւն. Դ. Բաշինջաղեան, Ազգաբնակչական ուսմունք. Բ. Իշխանեան։ **Վէպ եւ բանաստեղծութիւն**. Սերմնացանը. պատմուածք Վ. Փափազեանի, I Ծաղիկը, II Լեի վրա. Ա. Անարոնեանի, Հեքիաթ. Ա. Զարանեանի, Երգիչը։ Յ. Յովհաննիսեանի, Խրճիթում. Յով. Թումանեանի, Թող ընկեր իմ. Ա. Ծատուրեանի, Դու չես ազատուիլ. Յ. Յակոբեանի, Բուն քանդողի տունը Աստուած կը քանդէ, ասացուածք.—Հասօր։ I Գիշերն երազով, II Շատ մի տարի, III Վարդ է շրթունքդ Ա. Իսահակեան։ **Երգիծաբանական**. Մի հաւատա։ **Օտար գրականութիւնից**. Բանաստեղծը.—Էդէնֆելդի. թարգ. Լ. Բաբայեան, Մահ. Տեսմայէրի, Հանգուցեալը. Գ. դը Մոպասանի, թարգ. Լ. Մ. Ադամեան, Անաջողութիւն. Ա. Չեխովի, Ծննդեան գիշեր, Դօրօշեվիչի։ **Դպրոցական**. Հայոց դպրոցները Պարսկաստանում Մ. Զառաֆեան, Դպրոցական գործը Կովկասում, Հայկական դպրոցները Թիւրքիայում, Հայոց հոգեոր դպրոցները Ռուսաստանում, Նոր դպրոցներ Ռուսաստանում։ **Ուրիշ ընկերութիւններ եւ միմնարկութիւններ**. Թիֆլիսի հայ. բարեգ. ընկերութիւնը Յ. Կ., Դրամատիկական ընկերութիւն, Թէհրանի բարեգ. ընկերութիւնը, Բագուի բարեգործ. ընկերութիւնը, Անխաբադի հայ. բար. ընկերութ.։ **Թատրոն եւ երաժշտութիւն**. Դաւանէ կամ Սարգիս Մեհրաբեան Գ. Զմշկեան, Թատրոն. գործը Թիֆլիսում, Նոր-Նախիջևանի դրամատ. ընկերութեան գործունէութիւնը։ **Պատ. մամուլ եւ գրականութիւն**. Հայ թերթերը սկզբից մինչև մեր օրերը. Գ. Լևոնեան, Կովկասում լոյս տեսած գրքեր, Հայ թերթեր Ռուսաստանում, Ռուսաստանի պարբ. մամուլը։ **Նշանաւոր դէպքեր ու դէմքեր**. Սմբատ Շահազիզ. յօդ. Լէօի, Քաջբերունի, Ադայեանց, Դերասանուհի Վարդուհի յօդ. Գ. Միրզեանի, Ժօրժ Զանդ, Էմ. Կանտ. յօդ. Ե. Թոփչեանի, Պեարարկին։ **Մահագուցակ**. 1 Գարագաշեան. յօդ. Սարուխանի, 2. Մանուէլ Քաջունի, 3. Ա. Յովհաննիսեան, 4. Ներսէս Շահրամեան, 5. Յ. Տէր-Յովհաննիսեան, 6. Ի. Փիթոյեան, 7. Զէլինսկիյ, 8. Կրիւգեր Լ. Բ. 9. Մօմզէն յօդ. Լ. Բաբայեանի, 10. Սմայլս, 11. Մաւր Իսկայ, 12. Լենբախ, 13. Չեխով. Հ., 14. Վերեշչագին, 15. Միխայլովսկի յօդ. Ե. Թ., 16. Ս. Սպենսէր Ե. Թ., 17. Գաբրիել Տարդ, 18. Հէնրի Սաէնլի։ **Քաղաքներ**. Թիֆլիս. Բագու. Երևան։ **Երգ եւ երաժշտութիւն**. 1) Գուբանի երգ—Կոմիտաս վարդապետի, 2) Ֆինջան, 3) Քեօրօղլի—Նիկ. Տիգրանեան։ **Պատերազմ եւ խաղաղութիւն** Խաղաղասիրական շարժումը. Հ. Առաքելեանի, Ռուս եպօնական պատ. հերոսները ժամանակակից եպօնիան յօդ Ե. Թոփչեանի։ **Մեր պատկերները**. Զկնորսը և Զրահաբոր, Զինաթափ ամուրը, Վիշտը, Բնութեան գրկում, Մալօրուսական Իգիլա, Խմբագրութեան կողմից, Վրիպակներ։ Յայտարարութիւններ։

Բացի դրանից բովանդակութեան մէջ 65 ուրիշ պատկերներ։ Գինը ոսկեզօծ կազմով 1 ր. 20 կոպ., ճանապարհածախս 30 կոպ.։

Դիմել. Тифлисъ, Мадатовская, 15, Е. Топчяну. Արտասահմանից. Tiflis, Madatowskaia 15. E. Toptschian. (Հ. կ.) 14—16

Թիֆլիսի գործակատարների փոխադարձ օգնութեան ընկերութեան վարչութիւնը

յայտնում է. 1) ընկերութեան բժիշկներն են. ա) բժ. Ա. Պ. Կարապետեան (Միքայէլեան փող. 94) և բ) բժ. Ս. Ս Իսատամանով (Բէհրութեան փող. 26)։ Ատամնաբոյժներ. ա) Ա. Ա. Մայսուրեան (Վէլիամինովսկայա փող. 22) և բ) Դ. Ս. Կլէանսկի (Ելիսավէտինսկայա փողոց 56)։ Բժշկական օգնութիւն ստանալու համար անդամները պարտաւոր են ունենալ տետրակներ, որոնք տրվում են ընկերութեան գրասենեակում (Դանովսկայա № 17) ժամը 5½-ից մինչև 8½ երեկոյեան։

2) Ընթերցարանը, ուր ստացվում են մինչև 30 զանազան հրատարակութիւններ, բաց է ամեն օր 7 ից մինչև 11-ը առաւօտեան և 6-ից մինչև 11 ը երեկոյեան կիրակի օրերը 9 ից—2 ը և 5-ից մինչև 8 ը։

3) Նախնական միանուագ վճարը՝ համաձայն ֆինանսների մինիստրի թոյլտուութեան՝ 5 ր. է առաջին կարգի անդամների համար և 3 բուբլի 2 րդ և 3 րդ կարգի անդամների համար՝ փոխանակ նախկին 10 բուբլու, իսկ անդամավճար առաջին կարգի անդամների համար տարեկան 15 բուբլի, 2 րդ կարգի 10 ր. և 3 րդ կարգի 5 ր.

4) Վարչութիւնը պայմանաւորվել է դեղատների, զանազան վաճառականների, գործարանների և դերձակների հետ, ընկերութեան անդամներին որոշ զիջումներ անելու։ Այդ ֆիրմաների և տպած պայմանների տետրակները կարելի է ստանալ ընկերութեան գրասենեակում։

5) Համաձայն ընկերութեան կանոնադրութեան § 18-ի՝ խնդրվում է անդամներին վճարել երկրորդ 1904 թ. կիսամեակի անդամավճարը։ 1—5

ОТКРЫТА ПОДПИСКА

на ежедневную политическую, общественную и литературную газету

„НОВОЕ ОБОЗРѢНІЕ“

выходящую въ гор. Тифлисѣ подъ **новои редакціей** и по слѣдующей новой программѣ.

Новая редакція ставитъ себѣ цѣлью поддерживать традиціи и идеалы предшествовавшихъ редакцій, въ соотвѣтствіи съ новыми запросами нашего времени, столь богатаго событіями какъ во внѣшней, такъ и во внутренней жизни.

Подписная цѣна какъ для городскихъ, такъ и иногородныхъ подписчиковъ съ доставкой и пересылкой: на годъ—7 руб., на ½ года—4 руб., на 3 мѣсяца—2 р. 50 к. и на 1 мѣсяцъ—1 руб. За границу 14 руб. въ годъ.

Подписка съ 1-го и 15-го числа каждаго мѣсяца и объявленія принимаются въ конторѣ газеты [Барятинская ул., 8] и въ книжномъ магазинѣ Л. Б. Хиддекеля [на Головинском пр.], а также въ провинціальныхъ отдѣленіяхъ конторы газеты.

Плата за обявленія: для Кавказскаго края на 1-й страницѣ одинъ разъ—15 коп. [со строки петита], на 4-й страницѣ—8 коп. Повторныя объявленія пользуются скидкой.

Лицамъ, ищущимъ личныхъ занятій и труда, дѣлается скидка 50% противъ обычной таксы.

Подписывающіеся теперь же на весь 1905 годъ будутъ получать газету **безплатно** въ ноябрѣ мѣсяцѣ настоящего года. 1—3

Բագուայ բաժանմունքում
«Պարապետի վրա»

Եղբայրք ՄԼԷԼԻՔ-ՄԱՐՈՒԹԵԱՆՑՆԵՐԻ

խանութում ստացված է մեծ քանակութեամբ ընծաների համար շքեղ արկղներ, երեխայի մկրտութեան համար զարդարված շապիկներ, պակի սարքեր, ֆիդաններ, ծաղիկներ, մոմեր և այլն։ Կանանց գլխի սարքեր, աղլուխներ, չքիլաներ, հաշեաներ։ Շարունակ ստացվում են ձմեռվայ տաք ապրանքներ։ Դրսի պատուէրները կատարվում են ճշդութեամբ։
(Կ.Չ.) 27—30